I

ԴԱՎԻԹ ԿՅՈՒՐՈՊԱՂԱՏ
(† 31-ը մարտի 1000)*

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ

Կյուրոպաղատի տիտղոսը, որը Լևոն Հայկազն կայսրը շնորհել էր Կղարջքի իշխան Աշոտ Բագրատունուն, ի սկզբանե, որոշակի առումով, դարձել էր ժառանգական: Աշոտը Վասակի թոռն էր, Աշոտ պատրիկի († 761) որդին: 775 թ. Հայաստանում բռնկված ապստամբության անհաջողությունից հետո նա պատսպարվել է Տայքում և դարձել Բագրատունիների վրացական ճյուղի նախահայրը:

Աշոտ Կյուրոպաղատն ունեցել է երկու որդի՝ Բագրատը և Ատրներսեհը: Բագրատը ժառանգել է կյուրոպաղատի տիտղոսը, որն այնուհետև անցել է նրա հետնորդներին: Ատրներսեհը պահպանել է ազգային մամվալ(իս) տիտղոսը, որը հատուկ է վրացական ավագ ֆեոդալներին: Դավիթ Կյուրոպաղատը, որին վերաբերում է խոսքը, սերում էր կյուրոպաղատների տոհմից, այն է՝ պատկանում էր Բագրատ Կյուրոպաղատի ընտանիքին: Վրացական և հայկական սկզբնաղբյուրներն այս հարցում համերաշխ են:

*Հանգուցյալ Յ. Մարկվարտը, հենվելով Կոստանդին Ծիրանածինի վկայության վրա, հակված է եղել ապացուցելու, որ Դավիթ Կյուրոպաղատը սերվում էր մամփալների ճյուղից, այսինքն՝ Ատրներսեհի տնից**: Այդուհանդերձ, այն երկու գլուխների մանրազնին քննությունը, որոնք կայսր հեղինակը նվիրել է վրաց Բագրատունիներին, որևէ բան դրանցում չի բացահայտում, որը, ի հեճուկս ազգային ավանդության, կարող էր ապացուցել Մարկվարտի տեսակետը: Ստորև ներկայացնում ենք Դավիթ Կյուրոպաղատի ավանդական տոհմաբանությունը:*

---

* «Հանդեսի» խմբագրությունը շնորհակալությամբ նշում է, որ Ն. Ադոնցի ֆրանսերեն գրված սույն անտիպ աշխատությունը խմբագրությանը ուրամադրել է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Պ. Հովհաննիսյանը: Նա սույն աշխատանքը հայտնաբերել է Համազգայինի Բեյրութի գրական ֆոնդում (Ն. Ադոնցի ֆոնդ, պահարան I, գզրոց Բ, թղթածրար 1, թ. 1–72): Ցավոք, արխիվում չեն պահպանվել բնագրային որոշ էջեր, սակայն դա չի խաթարում Ադոնցի աշխատության գիտական նշանակությունն ու ուղղվածությունը:

Ուղիղ փակագծերում տրված ծանոթագրությունները կատարել է Պ. Հովհաննիսյանը. նա է կատարել նաև բուն բնագրում որոշ հատուկ անունների շտկումները:

** [Յ. Մ ա ր կ ո ւ ա ր տ. Վրական Բագրատունեաց ծագումը. Վիեննա, 1913: Տե՛ս տոհմածառը]:

ԿՅՈՒՐՈՊԱՂԱՏՆԵՐԻ ՃՅՈՒՂԸ[1]



ՄԱՄՓԱԼՆԵՐԻ ՃՅՈՒՂԸ[2]



Ինչպես տեսնում ենք, Դավիթ Կյուրոպաղատն Ատրներսեհ թագավորի չորս որդիներից մեկի՝ Սմբատի թոռն է: Մարկվարտը գտնում է, որ այս չորս եղբայրները ոչ թե Ատրներսեհ թագավորի († 923), այլ մեկ ուրիշ

---

1 Histoire de la Georgie [depuis l'antiquite jusqu'au XIXe siecle. Traduite du georgien par M. Brosset.] 1re [partie. S.-Petersbourg, 1849,] p. 280, 284 [այսուհետև՝ M. B r o s s e t]:

2 Նույն տեղում, էջ 271–272, 283–284:

Ատրներսեհի († 945) որդիներն են, որը հետագայում դարձել է վանական՝ Վասիլ անվամբ: Այսպիսով, ազգային ավանդույթը կարող էր մամփալյան տոհմի Ատրներսեհին շփոթել թագավոր և կյուրոպաղատ Ատրներսեհի հետ: Նա կարծում է, որ Կոստանդին Ծիրանածինի մոտ գտել է իր տեսակետի հավաստումը: «[De] Administrando Imperio»-ի 46-րդ գլխում է, որ կայսր հեղինակը, քննարկելով Արտանուջի[3] հարցը, որոշ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իբերական իշխանների մասին:

Արտանուջ քաղաքը Կղարջք կոչվող գավառի՝ վրաց Բագրատունիների օրրանի, վարչական կենտրոնն էր: Այստեղից նրանք առաջ են ընթացել դեպի հյուսիս և գրավել Ացարան ժամանակակից Աջարիան, որը գտնվում է [Ծորոխի]՝ նախկին Ակամսիսի, վտակի վրա: Այնուհետև նրանք տարածվել են դեպի հարավ ու դարձել Տայքի և անդամ Բասենի տեր ու տնօրենները:

Բագրատունիների առաջընթացը դեպի Սև ծով բավական անհանգստացնող փաստ էր բյուզանդական իշխանությունների համար, որոնց ավանդական քաղաքականությունը միտում ուներ ապահովելու կայսրության գերիշխանությունը ծովի ամրողջ ավազանում կամ, համենայն դեպս, այն պահպանելու վերջինիս ազդեցության ոլորտում: Ուստի, Գուրգեն իշխանը († 941), որը X դ. առաջին կեսին իշխում էր Աջարիայում, մեծարվել է մագիստրոսի տիտղոսով և արժանացել նաև այլ առանձնաշնորհումների, որպեսզի, անկասկած, կայսրության հետ իրեն ավելի կապված զգա:

Արտանուջը, որը բավական անառիկ ամրոց էր, այս դարաշրջանում ներկայացնում էր միջազգային առևտրի խիստ կարևոր հանգուցակետ և հրապուրում Տրապիզոնի, Իբերիայի, Աբազգիայի, ինչպես նաև Հայաստանի ու Ասորիքի առևտրականներին: Միաժամանակ, Արտանուջն իբրև հույժ կարևորություն ունեցող ստրատեգիական կետ, ձեռքում էր պահում Իբերիայի, Արաղդիայի և Մխխիոնի բանալին: Կայսրությունը փափագում էր տիրել այդ ամրոցին և հետամուտ էր այն ձեռք բերելու առիթին:

Արտանուջի պատմությունն ընդհանուր գծերով ուրվագծելու համար Կոստանդին Ծիրանածինը թվարկում է այն իշխաններին, որոնք IX դ. վերջերից մինչև իր ժամանակները հաջորդաբար այն իրենց տիրապետության ներքո են ունեցել:

Արտանուջի առաջին տեր ու տնօրենը Սմբատն էր, որին հեղինակը ներկայացնում է իբրև Մեծ: Նա ուներ երկու որդի՝ Բագրատը (Պանկրատիոսը) և Դավիթը, Բագրատը ժառանգել է Արտանուջը, իսկ Դավիթը նրա տիրույթների մյուս մասը: Բագրատն Արտանուջը թողել է Գուրգենին (Կուրկենիոսին)՝ իր երեք որդիներից (Ատրներսեհ, Գուրգեն և Աշոտ, որի մականունը Կիսկասի էր) մեկին: Գուրգենից Արտանուջն անցել է նրա եղբորը՝ Աշոտ Կիսկասիին, իսկ այնուհետև՝ վերջինիս փեսային, որի անունը ևս Գուրգեն էր և որը հեղինակի օրոք մագիստրոս էր: Գուրգենի մահից հետո մի քանի իշխաններ, ներառյալ Աշոտը, որը հեղինակի ժամանակաշրջա-

3 Կոստանդին Ծիրանածինն այն անվանում է Ἀδρανουτζη և το Ἀδρανουτζι(ν). վրացական տերմինն է «Artanouj», հայկականը՝ «Artanouč», թուրքականը՝ «Ardanouj»: Նախընտրելի է «Artanouj» ձևը:

նում կյուրոպաղատ էր, պայմանավորվածություն են ձեռք բերել քաղաքը Սմբատի որդի Դավթի որդի Սմբատին զիջելու շուրջ: Այս իշխանների տոհմաբանությունը ներկայանում է հետևյալ կերպ.



Այս տոհմաբանությունը կատարելապես համընկնում է այն տոհմաբանությանը, որը մենք անվանեցինք մամփալների ճյուղ: Քաղաքի վերջին տիրակալ Սմբատը՝ Դավթի որդին է: Սակայն ո՞վ էր կյուրոպաղատի տիտղոս կրող Աշոտը, նա, որը միջամտել էր բանավեճերին՝ դրանք Սմբատի օգտին վճռելու համար: Ակնհայտորեն, Սմբատի աղդականը: Մեր հեղինակը հայտարարում է, որ Սմբատի հայր Դավթի մայրը և Աշոտ Կյուրոպաղատի հայր Ատրներսեհ Կյուրոսլաղատի մայրը երկու եղբայրների դուստրեր էին, այսպիսով՝ հարազատ զարմուհիներ. τοῦ Δαβὶδ ἡ μήτηρ καὶ τοῦ Ἀδρανασὲ τοῦ κουροπλάτου, τοῦ πατρὸς τοῦ ἀρτίως Ἀσωτίου τοῦ κουροπαλάτου, ὑπῆρχεν δύο ἀδελφῶν παιδία, ἤγουν ἐξάδελφαι[4]: Այլ կերպ ասած, Սմբատի տատը և Աշոտի տատը հարազատ զարմուհիներ էին: Հարցն այն է, թե ո՞վ էր Աշոտ Կյուրոպաղատի հայր Ատրներսեհ Կյուրոպաղատը: Մարկվարտը սխալմամբ նրան նույնացնում է Ἀδρανασέρ-ի հետ, որը տոհմաբանության մեջ մատնանշվում է իբրև Դավթի զարմիկ: Կոստանդին Ծիրանածինը հստակորեն զանազանում է այս երկու անձանց. մեկն անվանվում է Ἀδρανασέρ, մյուսը՝ Ἀδρανασὲ. վերջինս կյուրոպաղատն է, այն դեպքում, երբ առաջինը կյուրոպաղատ չի եղել: Եթե խոսքը վերաբերեր մեկ և միևնույն անձնավորությանը, հեղինակի համար ավելի դյուրին կլիներ ասել, որ Դավթի զարմիկը նա է եղել՝ առանց նեղություն կրելու փնտրել ազգակցություն իգական կողմից: Թեև այդ ազգակցությունն ինքնին չէր կարող ունենալ մեծ հավանականություն, քանզի միավորում է և՛ հորը, և՛ որդուն երկու եղբայրների դուստրերի հետ: Հարկ է «Վրաց ժամանակագրության» հետ մեկտեղ ընդունել, որ Ատրներսեհ Կյուրոպաղատը ոչ այլ ոք է, եթե ոչ կյուրոպաղատների ճյուղից սերված նույնանուն իշխանը, որն ընդունել էր թագավորի տիտղոս, սակայն բյուզանդացիների համար շարունակել էր մնալ կյուրոպաղատ: Այդ նա է, որ [Ռոմանոս] Լեկապենոսի օրոք, 922 թ., այցելել է մայրաքաղաք: Տարոնի իշխաններին վերաբերող նախորդ գլուխներից մեկում

4 [Constantinus Porphyrogenitus.] De Adm[inistrando] Imp[erio]. [De Ad. Imp. Recognovit Immanuel Bekkerus. Bonnae, 1840], p. 207.

խոսելով նրա մասին, մեր հեղինակը ենթադրում է, որ նա արդեն հայտնի էր, առանց դա ճշգրտելու կարիքն ունենալու: Ի գեպ, այս Ատրներսեհի ինքնությունը բացահայտվում է այն պատումում, որը հետևում է: Կայսր Ռոմանոս Լեկապենոսը հանձնարարել էր նավատորմիղի դրունգար պատրիկ Կոստանդին, որն այդ ժամանակաշրջանում միայն պրոտոսպաթար ու մանգլավիտ էր՝ կրելու ἱματιον μαγιστρατου προς το ποιησαι τον Κουρκενιον τον Ἴβηρα μαγιστρον:

Ճանապարհին, Իբերիայից եկող Ագապիոս վանականից, Կոստանդը տեղեկանում է, որ ο πατρικιος Ἀσωτιος ο καὶ Κισκασης καλουμενος պատրաստ է կայսրին հանձնելու Արտանուջ ամրոցը, որպեսզի այն չթողնի իր փեսա Գուրգենին, որի հետ բարեկամական հարաբերությունների մեջ չէը գտնվում: Կայսրը, որին տեղեկացրել էին Ագապիոսի առաքելության մասին, հրաման է տալիս Կոստանդին ամրոցը ձեռք բերելու համար շուտափույթ գնալ պատրիկ Աշոտ Կիսկասիի մոտ:

Ժամանելով Խաղտիք, Կոստանդը վերցնում է 300 զինված մարդուց բաղկացած ուժեղ պահակախումբ և մտնում Իբերիա: Ὁ μακάριος Δαβὶδ ο αδελφος Ἀσωτίου του αρτίως κουροπαλάτου կանգնեցնում է կայսեր բանագնացին: Նրա շքախումբը խիստ բազմանդամ էր, կասկած չհարուցելու համար, թե արդյո՞ք նա Գուրգենին՝ Ատրներսեհ Կյուրոպաղատի մահից հետո կյուրոպաղատի տիտղոս շնորհելու առիթով էր եկել: Ատրներսեհ Կյուրոպաղատի որդիները նախանձում էին իրենց հորեղբոր որդուն οἱ του Ἀδρανασὲ του κουροπαλάτον παῖδες του πατρος αὐτων τελευτησαντος φιλονεικείας τινας ἔσχεν μετὰ του ἐξαδέλφου αὐτῶν: Նրանք լավ գիտեին, որ Գուրգենը դիմել էր կայսրին, նրան հարուստ նվերներ ուղարկել կյուրոպաղատի կամ մագիստրոսի տիտղոս ստանալու համար: Ուստի, չորս եղբայրները οἱ τεσσαρες αδελφοί, ἤγουν του Ἀδρανασὲ του κουροπαλάτου οἱ παῖδες մտահոգված էին՝ տեսնելով միևնույն նպատակով ժամանած Կոստանդին: Սակայն բանագնաց Կոստանդը նրանց բացատրել է, որ ինքն այդպիսի շքախմբով է ժամանել Գուրգենին մագիստրոսի տիտղոս շնորհելու համար, և որ ինքն այնուհետև պետք է գնա Դավիթ մագիստրոսի մոտ, εἰς τον Δαβὶδ τον μαγιστρον, քանի որ նրա համար ևս կայսերական ուղերձ ուներ. καὶ προς τὸν Δαβὶδ κελευσιν απο του βασιλέως καὶ ξενια: Կոստանդը հիրավի մեկնում է Գուրգենի երկրամաս և նրան շնորհում մագիստրոսի տիտղոս. այնուհետև նա դնում է Արտանուջում գտնվող Աշոտ Կիսկասիի ամրոցը և նրան հանձնում կայսերական ուղերձը, καὶ δεδωκεν αὐτῷ την προς αὐτὸν του βασιλέως κελευσιν, որն Արտանուջի հարցին չէր վերաբերում, բայց այլ գործ էր: Այդուհանդերձ, բանագնացը չի մոռանում վերհանել Արտանուջի հարցը: Պատրիկ Աշոտ Կիսկասին պատրաստակամություն է հայտնում իր ամրոցը նրան հանձնելու համար: Կոստանդն Արտանուջի պարսպի վրա բարձրացնում է կայսերական դրոշը՝ ծանուցելու համար, որ բերդամրոցն այդուհետև պատկանում է կայսրությանը: Ինչ վերաբերում է Դավիթ Մեծին, ավելացնում է հեղինակը, նա չի համաձայնել իր երկրամասը կայսրին հանձնելու, թեպետ այն գտնվում էր Ակամսիսի տուրմայի և Մուրդուլի [գետի] հարևանությամբ. ὁ οὖν Δα-

βὶδ ὁ μέγας τὴν ἑαυτοῦ χώραν οὐκ ἐδίδουν τὸν βασιλέα, κ'ἂν τὰπαχ συνορῇ τὴν τούρμαν τοῦ 'Ακαμψῆ καὶ τῇ Μουργουλῇ: *Հստակորեն տեսանելի է, որ երեք իշխանների՝ Գուրգենի, Աշոտ Կիսկասիի և Դավիթ Մեծի համար Կոստանդն ունեցել է երեք հանձնարարություն: Այդ նույն Դավթին է, որին Կոստանդը պարտավոր էր այցելել Աշոտ Կիսկասիից հետո և որն այնտեղ ներկայացվում է իբրև մագիստրոս, այստեղ՝ Մեծ: Այս Գավիթը մերժել է Կոստանդի խնդրանքը և իր տիրությունը չի զիջել կայսրին: Այդ* κελευσις *է, որ Կոստանդը բերել էր նրա համար:*

Իր առաքելության արդյունքների մասին Կոստանդը պատրաստել է երկու զեկուցագիր և գրանք հղել կայսրին: Դրանցից մեկում նա ասում է, որ Գուրգենը երախտագիտությամբ է ընդունել այն մեծարանքը, որին արժանացել էր, մյուսում՝ որ Կիսկասին Արտանուջը հանձնել է [կայսրությանը]: Նա նաև հայտնել է, որ նրա ու նրա փեսա Գուրգենի միջև գոյություն ունի անհամաձայնություն և Արտանուջի համար օգնական ուժեր խնդրել, եթե հնարավոր է, սխոլերի դոմեստիկոսի հետ:

Իբերներ. ὁ τε μαγιστρος Κουρκενιος καὶ ὁ μαγιστρος Δαβὶδ καὶ ὁ ἀδελφὸς του κουροπαλάτου 'Ασωτίου *գրավոր բողոքներ են ուղարկել կայսրին սարակինոսներին միանալու սպառնալիքներով հանդերձ, եթե կայսրը ջանար բռնազավթել իրենց երկիրը և հայտարարել են, որ պատրաստ են նրանց հետ կայսրության և Արտանուջի դեմ ուղղված համաձայնության գալու՝ վերջինս վերագրավելու համար: Կայսրը հարկագրված է եղել հրաժարվել իր հրամաններից և գրել իբերական իշխաններին, որ Կոստանգն իրավասու չի եղել անելու այն, ինչն արել է և որ նրա արարքն անզգույշ նախաձեռնության հետևանք է: Անձամբ Կոստանդը կայսերական հրաման է ստացել իբերների երկիրը թողնելու և իր հետ* 'Ασῶτιον τὸν υἱὸν τοῦ τελευτηκότος 'Αδρανασὲ τοῦ κουροπαλάτου *մայրաքաղաք տանելու մասին՝ նրան հորենական կյուրոպաղատի տիտղոս շնորհելու համար:*

Կոստանդն Արտանուջը վերադարձրել է Աշոտ Կիսկասիին և գնացել Դավիթ Մեծի մոտ πρὸς τὸν Δαβὶδ τὸν μέγαν, καὶ 'επιδεδωκεν αὐτῷ ὑπερεῖχεν πρὸς αὐτὸν κέλευσιν: *Այստեղից նա շրջվել է և մտել Իբերիա ու այնտեղ՝ նույն վայրում միավորված տեսել Գուրգեն մագիստրոսին և Դավիթ մագիստրոսին՝ Աշոտ Կյուրոպաղատի եղբորը: Հարկ է այս Դավիթ մագիստրոսին չշփոթել վերոհիշյալ Դավիթ Մեծի հետ: Վերջիններս Կոստանդի վրա նախատինքներ են տեղացել՝ նրա վարքագծի համար: Նա նրանց անհրաժեշտ բացատրություններ է տվել և հրաժեշտ տվել՝ տանելով իր հետ Ատրներսեհ Կյուրոպաղատի որդի Աշոտին:*

Մենք արդեն վերը տեսանք, որ հետագայում Գուրգեն մագիստրոսն Աշոտ Կիսկասիից խլել է Արտանուջի բերդամրոցը և փոխարենը նրան տվել Տյուրոկաստրոն ամրոցը՝ Աջարիայի հովտի հետ, որը Κῶλωρις*-ի մոտակայքում սահմանակից է բյուզանդական երկրին: Աբազգիայի թագավոր Գեորգին, որի քույրն Աշոտ Կիսկասիի կինն էր, փորձել է պաշտպանել իր աներորդու իրավունքը, բայց նրա ջանքերն ապարդյուն են անցել: Գուրգենի մահից հետո Գեորգի թագավորը, Աշոտ Կյուրոպաղատը և նրա եղբայր Բագրատ մագիստրոսը պայքարի մեջ են մտել նույն բերդամրոցի*

պատճառով և համաձայնության հանգել այն Դավթի որդի Սմբատին գիջելու շուրջ:

Այնինչ այս պատումը թույլատրում է ճշգրտել Ատներսեհ Կյուրոպաղատի ինքնությունը: Համաձայնելով «Վրաց ժամանակագրության» հետ, մեր հեղինակն ընդունում է, որ նա ունեցել է չորս որդի: Երեքը հիշատակվում են իրենց անուններով՝ Դավիթ, Աշոտ և Բագրատ: Չորրորդի՝ Սմբատի անունը մեզ հայտնի է «Վրաց ժամանակագրությունից»: Նրանց հայրը՝ Ատներսեհ Կյուրոպաղատն արդեն մահացել էր, երբ Լեկապենոսի բանագնացը՝ պրոտոսպաթար Կոստանդը, ժամանել է Իբերիա: Նրա ժամանման տարեթիվը ճշգրտված չէ, բայց, համենայն դեպս, այն նախորդում է Լեկապենոսի գահընկեց լինելուն՝ 945 թ. դեկտեմբերին, Գուրգենի մահվանը՝ 941 թ., Կիսկասիի մահվանը՝ 939 թ. և Դավթի մահվանը՝ 937 թ., այն իշխանների, որոնց հետ Կոստանդը գործ է ունեցել: Մամփալների Ատներսեհը հագել է վանականի սքեմ և մահացել 945 թ.: Այսպիսով, նա դեռևս կենդանի էր Կոստանդի ժամանման պահին և, հետևաբար, ոչ մի ձևով չի կարող լինել չորս եղբայրների հայրը, որը մահացել է մինչ 937 թ.: Մյուս Ատներսեհը, որը կյուրոպաղատ էր և թագավոր, մահացել է 923 թ. և այդ նրան է, որ «Վրաց ժամանակագրությունը» ներկայացնում է իբրև չորս եղբայրների հայր: Դրա նկատմամբ կասկածներ տածելու համար պատճառներ չկան: Իր վարկածը պաշտպանելու համար Մարկվարտը հարկադրված է եղել կասկածի տակ դնելու Ատներսեհ վանականի մահվան տարեթիվը: Թագավոր Ատներսեհը, ըստ նրա, ուներ միայն մեկ որդի՝ Դավթին, և, հետևաբար, չորս եղբայրները կարող են լինել ոչ թե նրա, այլ Ատներսեհ վանականի որդիները: Այդուհանդերձ, Հովհաննես [Դրասխանակերտցի] կաթողիկոսն Ատներսեհ թագավորին է վերագրում ավելի քան մեկ որդի, քանզի նրա մոտ խոսքը վերաբերում է Ատներսեհ թագավորի ավագ որդուն («ղերէց որդի»)[5]: Ըստ Վարդանի, Գուրգեն թագավորը († 992) Ատներսեհ թագավորի որդի Դավթի եղբոր որդին էր (իմա՝ թոռը)[6]: Նա ընդունում է, այսպիսով, որ Ատներսեհ թագավորը Դավթից բացի ունեցել է այլ որդիներ:

Գուրգեն մագիստրոսը՝ Կիսկասիի փեսան, Կոստանդին Ծիրանածինի մոտ անվանվում է չորս եղբայրների ἐξάδελφος: Իրականում, Գուրգենը նրանց զարմիկն էր մոր կողմից, որը, համաձայն Հովհաննես կաթողիկոսի աներկբայելի վկայության, նրանց հոր՝ Ատներսեհ Կյուրոպաղատի և թագավորի քույրն էր[7]: Գուրգենը «քեռորդին» է՝ Ատներսեհի քրոջ որդին: Եթե չորս եղբայրներն Ատներսեհ վանականի որդիներն էին, նրանց ազգակցությունը Գուրգենի հետ կարող է հանդել մեկ եղբոր ծոռների ազգակցությանը՝ մեկ այլ եղբոր թոռների հետ: Նման ազգակցությունն այդուհանդերձ ἐξάδελφος ազգակցություն չէ:

---

5. Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս. Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 208:

6. Վ ա ր դ ա ն. Հաւաքումն պատմութեան. Վենետիկ, 1862, էջ 82:

7. Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս. Նշվ. աշխ., էջ 310: Այս Գուրգենին հարկ չկա շփոթելու այն Գուրգենի հետ, որն Աշոտ թագավորի եղբոր՝ Աբասի քրոջ ամուսինն էր (Նույն տեղում, էջ 145):

Բանագնաց Կոստանդն, ի դեպ, Դավթի համար ստացել էր մի հանձնարարություն: Ո՞վ էր այս Դավիթը: Բրոսսեն և Մարկվարտը կարծել են, թե խոսքը վերաբերում է Դավիթ մագիստրոսին՝ Աշոտ Կյուրոպաղատի եղբորը: Ինքնության նման ճշգրտումը որևէ ձևով չի արդարացվում և այն իրականության հետ որևէ աղերս չունի: Մեր սլատումը նրանց հստակորեն զանազանում է. Դավիթ մագիստրոսը միշտ նշվում է իբրև Աշոտ Կյուրոպաղատի եղբայր, այնժամ, երբ մյուս Դավիթը երկու անգամ անվանվում է Դավիթ Մեծ և մեկ անգամ՝ Դավիթ τὸν μάγιστρον, մի բան, որը կարող է լինել τὸν μάγιστρον-ի սխալ տարընթերցումը[8]: Դավիթ Մեծն Արտանույնն ստացած այս Սմբատի հայրն է և Աշոտ Կիսկասիի հորեղբայրը: Բյուզանդական իշխանությունները հետամուտ էին ոչ միայն Արտանույնի, այլև Դավթի բաժնի ձեռքբերմանն Արտանույնի տարածաշրջանում, այն է՝ Կղարջքում: Մենք տեսանք, որ Սմբատ մամփալն իր հողերը բաժանել էր երկու որդիների միջև, որոնցից Բագրատը ստացել է Արտանույնը, իսկ Դավիթը ἐλαχεν ἕτερα χώρα, այն է՝ միևնույն Կղարջքի տարածաշրջանի մեկ այլ մասը, ուր գտնվում էր Արտանույնը: Կոստանդը հետամուտ էր ոչ միայն Կիսկասիի Արտանույնին, այլև հավասարապես Դավթի տիրույթին, որը սահմանակից էր Ակամսիսի տուրմային և Մուրգուլի [գետին]: Ժամանակակից Մուրգուլ սու գետը թույլատրում է այս տուրման տեղադրել Կուրի ձախ ափին՝ Կղարջքի հյուսիսային մասի հանդիպակաց կողմում: Այս տարածաշրջանի հարավային կողմն Արտանույնի հետ պատկանում էր մեկ եղբորը, իսկ միևնույն տարածաշրջանի հյուսիսային կողմը մյուսին՝ Դավթին: Իրականում, երբ կայսրի հրամանով Կոստանդն Արտանույնը հանձնել է նրա տիրոջը՝ Կիսկասիին, գնացել է Դավիթ Մեծի մոտ՝ կայսերական հանձնարարականը նրան փոխանցելու համար: Այնուհետև, նա վերադարձել է ὑπέστρεψε καὶ εἰσῆλθεν εἰς Ἰβηρίαν, ուր գտել է Գուրգենին և Դավիթ մագիստրոսին միասին: Այդ նշանակում է, որ Կոստանդն Արտանույնից մեկնել էր դեպի հյուսիս՝ Դավթի տիրույթը և այնտեղից բռնել վերադարձի ճանապարհը՝ Իբերիա մտնելու համար, մի անվանում, որի ներքո նկատի ունեն կյուրոպաղատի տիրույթը Տայքում: Դավիթ Մեծ ավագը հրաժարվել էր զիջել իր հողերը. τὴν ἑαυτοῦ χώραν οὐκ ἐδίδου: Գուրգեն մագիստրոսը և Դավիթ մագիստրոսն ընդդիմացել են Արտանույնի նկատմամբ կայսեր ունեցած հավակնությանը: Գուրգենը պատժել է Աշոտ Կիսկասիին Արտանույնի հարցում նրա ուխտադրուժ քաղաքականության համար՝ նրանից հետ վերցնելով այդ նույն ամրոցը: Նրա մահից հետո, 941 թ., Գեորգի Աբազգացին և Բագրատ մագիստրոսը համաձայնության են հանգել քաղաքը Սմբատին զիջելու հարցում: Ո՛չ Դավիթ Մեծը, որն այս Սմբատի հայրն է, ո՛չ էլ Դավիթ մագիստրոսը՝ կյուրոպաղատի որդին, այլևս ի հայտ չեն գալիս հարցի վերջնական կարգավորման ժամանակ, ինչից հարկ է եզրակացնել, որ նրանք վախճանվել էին: Առաջինը մահացել է 943 թ., իսկ երկրորդը՝ 937 թ., և քանի որ Բագրատի մահը վրա է հասել 945 թ., հարկ է Արտանույնի՝ Սմբատին զիջելու տարեթիվը սահմանել մինչ 945 թ. և 943 թ. հետո, ասենք՝ 944 թ., այսպիսով, դեռևս կայսր Լեկապենոսի կենդանության օրոք:

---

8 De Adm[inistrando] [Imperio,] p. 210, 211, 213.

Աշոտ Կյուրոպաղատն իր եղբայրների հետ դեռևս հիշատակվում է Կոստանդին Ծիրանածինի միևնույն աշխատության մեկ այլ գլխում՝ կյուրոպաղատի տիրույթների և կայսրության միջև սահմանի շուրջ վիճաբանության հարցում: Լևոն VI [Իմաստասերի] տիրապետությունից ի վեր կայսրությունը ջանում էր ձեռք բերել Κετζεον բերդամրոցը, կարևոր մի կայան, որը կթույլատրեր խոչընդոտել Թեոդոսուպոլսի մատակարարմանը և հարկադրել քաղաքի կայազորին անձնատուր լինել սովի միջոցով: Այդուհանդերձ, նույնիսկ Թեոդոսուպոլսի դրավումից հետո այն կրկին իր տնօրինության տակ վերցնելու պայմանով, կյուրոպաղատը համառում էր վերոհիշյալ ամրոցը զիջելու շուրջ: Այնուամենայնիվ, ամեն անգամ, երբ կայսրությունը հակառակորդից դավթում էր որևէ ամրոց, իբերները միջամտում էին դրանք պահանջելու համար: Նրանք հավակնում էին ամրագրելու իրենց իրավունքը Լեկապենոսի և անձամբ Կոստանդին Ծիրանածինի կողմից տրված ոսկե կնիքների [խրիսովուլ] նկատմամբ: Կյուրոպաղատի աղատներից մեկը՝ Ζουρβανελης-ը, ոսկե կնիքը ներկայացրել է Կոստանդին կայսրին: Լեկապենոսի ոսկե կնիքը կազմված էր այնպիսի ձևով, որ կյուրոպաղատը հավատարմության երդում էր տալիս կայսրությանը և նրա շահերին՝ Արևելքը կայսեր տիրապետության տակ ներդրավելու ուղղությամբ գործելու խոստումով հանդերձ: Ռոմանոս Լեկապենոսը փոխարենը պարտավորվում էր մեկընդմիշտ վավերացնել կյուրոպաղատի տիտղոսը և իշխանությունը նրա ու նրա հետնորդների համար. ὑπεσχεθη...ἵνα...διαμείνῃ ἀμετασάλευτος καὶ αὐτὸς καὶ οἱ του γένους αὐτοῦ εν τῇ τοῦτου ἀρχῇ καὶ εξουσία: Կյուրոպաղատի տիրույթները կմնան անձեռնմխելի, իսկ այն, ինչը նա կարող է գավթել թշնամուց կամ առանձին, կամ կայսերական զորքերի հետ, կամ եթե գրավի ու ավերի Թեոդոսուպոլիսը, կպատկանի կայսրությանը:

Կոստանդինի ոսկե կնիքն ավելի բարեհաճ էր կյուրոպաղատի համար: Այն կյուրոպաղատին և նրա զարմիկ (ἀνεψιος) Ատրներսեհին թույլատրում էր իբրև լիիրավ սեփականություն օգտագործել այն ամենը, ինչը նա կարող էր արաբներից կորզել իր սեփական ուժերով: Այդուհանդերձ, իբերներին երբևէ չի հաջողվել գրավել Թեոդոսուպոլիս քաղաքը, ոչ էլ Բասենում դտնվող Ավնիկ կամ Մաստատոն բերդամրոցները: Նրանք չէին ցանկանում վտանգի ենթարկել իրենց բարեկամական հարաբերություններն անհավասների հետ: Դա բյուզանդական ուժերն էին, որոնք զորավար Հովհաննես Արրավոնիտեսի կամ պատրիկ Թեոփիլոս Կուրկուասի հրամանատարությամբ ասպատակել են Թեոդոսուպոլսի տարածաշրջանը և հարկադրել Ավնիկի ամիրային ճանաչելու կայսրության դերիշխանությունը: Ինչ վերաբերում է Մաստատոնին, այն գրավվել է Հովհաննես Կուրկուաս մագիստրոսի կողմից Թեոդոսուպոլսի պաշարման ժամանակ և դրվել պրոտոսպաթար Պետրոնաս Բոյիլասի հրամանատարության ներքո: Սակայն, քանի որ Բադրատ մագիստրոսը սատարել էր բյուզանդական զորավարին Թեոդոսուպոլսի համար մղվող պայքարում, նա իրեն իրավասու էր համարում պահանջելու Մաստատոն ամրոցը: Բայց ստանալուց հետո նա այն հանձնել է Թեոդոսուպոլսի ամիրային: Երբ Թեոդոսուպոլիս քաղաքը բյուզանդացիների կողմից վերագրավվել է, իբերները կրկին կյանքի են կոչել

իրենց հավակնությունները Մաստատոնի նկատմամբ: Կայսրը գրանք հավանության չի արժանացրել, բայց, հաշվի առնելով կյուրոպաղատի հավատարմությունը, համաձայնվել է, որ Բասենում իբրև սահման ծառայեն Արաքսը կամ Փասիսը, այնպես որ, դեպի Իլլիրիա [Աղորի աշխարհ] ձգվող ձախ ափը պատկանի իբերներին, իսկ դեպի Թեոդոսուպոլիս ձգվող աջ ափը՝ կայսրությանը:

Հովհաննես Կուրկուասի ձեռնարկած՝ Թեոդոսուպոլսի պաշարման տարեթիվը հայտնի չէ. այն նախորդում է միևնույն քաղաքի գրավմանը Թեոփիլոս Կուրկուասի կողմից: Ասողիկը նշում է, որ սխոլերի դոմեստիկոս Զմշկիկը քաղաքը գրավել է ըստ հայոց թվարկության 398 թ. (949 թ.): Յահյան հավաստում է և ճշդրտում այդ տարեթիվը՝ մատնացույց անելով 949 թ. սեպտեմբեր ամիսը*: Ըստ Ասողիկի, «երիտասարդ Հովհաննեսը՝ Զմշկիկի թոռը», այդ պատերազմում է նշանավոր դարձել, մի բան, որը հավաստում է, թե հայ պատմիչը դոմեստիկոս Զմշկիկ ասելով նկատի ունի ոչ թե Հովհաննես Կուրկուաս մագիստրոսին, այլ նրա եղբայր Թեոփիլոսին, որի թոռը հիրավի երիտասարդ Հովհաննեսն էր, այն է՝ ապագա կայսր Զմշկիկը: Նա միայն սխալվել է նրան վերագրելով դոմեստիկոսի տիտղոս, որը պատկանում էր նրա եղբայր Հովհաննեսին:

Ասողիկը մեզ տեղեկացնում է, որ Համգանյանը [Սայֆ ալ-Դաուլան], ըստ հայոց թվարկության 388 թ. (939–940 թթ.), հզոր բանակով մտել է Կոլոնիա և նահանջել: Հավանաբար այդ ներխուժմանը հակազդելու համար է, որ Հովհաննես Կուրկուասը հարձակման է անցել և ըստ հիջրայի թվարկության 389 թ. (941 թ. սեպտեմբեր–942 թ. սեպ[տեմբեր]) գավթել Ազզենը, Դարան, Նիսիլինը և Մայաֆարկինը[10]: Յահյան նշում է ըստ հիջրայի թվարկության 331 թ. (942 թ. սեպ[տեմբեր]–943 թ. սեպ[տեմբեր])[11], որը նախընտրելի է, եթե հաշվի առնենք, որ 941 թ. Կուրկուասը գտնվում էր բալկանյան ռազմաճակատում, որտեղից սեպտեմբեր ամսին՝ 941 թ. ինդիկտիոնի XV, նա հետ է մղել ռուսներին: Ձեռնարկելով 942 թ. արշավանքն արաբների դեմ, Կուրկուասը մտել է Հայաստան և յոթ ամիս շարունակ պաշարել Թեոդոսուպոլիս քաղաքը՝ առանց ի վիճակի լինելու այն գրավել: Այդ ժամանակ է, որ նա դրավել է Մաստատոն բերդամրոցը և մեկնել Միջագետք: 943 թ. մայիսի 18-ին նա գտնվում էր Դարայում: Մաստատոնի զիջումը Բագրատ մագիստրոսին ակնհայտորեն վերաբերում է 942 թվականին: 949 թ. Թեոդոսուպոլսի գրավման ժամանակ Բագրատն այլևս կենդանի չէր, քանի որ նրա մահը վրա էր հասել 945 թ.: Նրա որդի Ատներսեհը և Աշոտ Կյուրոպաղատը պահանջել են Մաստատոն բերդամրոցը, որը Բագրատ մագիստրոսը հանձնել էր Թեոդոսուպոլսի ամիրային և որը Թեոփիլոս Կուրկուասը հենց նոր էր վերագրավել: Լեկապենո-

---

9 [Histoire de] Y a h y a[-ibn-Saïd d'Antioche. ed. et trad. en français par G. Kratchkovsky et A. Vasiliev].– "Patr[ologia] Orientalis". T. XVIII, [Paris, 1924,] p. 768.

* [«Ուր բազում գործս արութեան ցուցեալ Կիւռ-Ժան թոռն Զմշկայ, ի մանկութեան տիս գոլով յայնժամ». տե՛ս Ա ս ո ղ ի կ. Պատմութիւն տիեզերական. Ս. Պետերբուրգ, 1885, էջ 179]:

10 [G.] Weil. [Geschichte des Chalifen. Nach Handschriftlichen, grosstentheils noch unbenutzen Quellen. Bd.] II. [Mannheim, 1846,] S. 689.

11 Y a h y a. [նշվ. աշխ.,] էջ 730:

սի ոսկե կնիքը տրվել էր մինչ 942 թ., Կոստանդին Ծիրանածինինը՝ Բագրատի մահվան տարեթվից 945 թ. հետո, մինչև 949 թ.: Զորտուանելի առաքելությունը կայացել է 949 թ. և 952 թ. միջև, երբ Կոստանդինը դրել է իր աշխատությունը:

Աշոտ Կյուրոպաղատը մահացել է 954 թ.: Նրա հայր Ատրներսեհը մահացել էր 923 թ.: Ըստ «Վրաց ժամանակագրության», Ատրներսեհին հաջորդել է նրա որդի Դավիթը, որը 937 թ. մահկանացուն կնքած մագիստրոսն է: Տարօրինակ է, որ կայսրը կյուրոպաղատի տիտղոս շնորհել է ոչ թե Դավթին, այլ Աշոտին: Կարելի է ենթադրել, որ Ատրներսեհի մահից հետո բյուզանդական իշխանությունները կյուրոպաղատությունը նրա հաջորդին չեն շնորհել այն դիմադրության պատճառով, որը նրա որդիները ցուցաբերել են կայսրին մինչև Կոստանդի առաքելության ավարտը: Դժբախտաբար, մեզ հայտնի չէ իրեր իշխանների մոտ Կոստանդի ժամանման տարեթիվը, որպեսզի կարողանանք ճշգրտել, թե ե՞րբ է Աշոտը նշանակվել կյուրոպաղատ: Թվում է, թե մինչ այդ Դավիթն իշխել է իբրև մագիստրոս, առանց հաստատվելու կյուրոպաղատի տիտղոսում: Մովսես Կաղանկատվացին մեզ տեղեկացնում է, որ «Հույների Դավիթ մագիստրոսը» թագավորական թագն ուղարկել է Աղվանքի իշխան Հովհաննես-Սենեքերիմին[12]: Այս Դավիթը, որի ինքնությունը դեռևս չի ճշգրտվել, հնարավոր է, որ լինի մեր Դավիթ մագիստրոսը: Հովհաննես-Սենեքերիմը Գրիգորի թոռն էր, որին իր հոր՝ Սահակ Սևադայի հետ կուրացրել է Աշոտ [II Երկաթ] թագավորը մոտավորապես 918 թ.[13]: Նրա հոր անունն էր Իշխանիկ: Նա ապրում էր միևնույն ժամանակաշրջանում ինչ Դավիթը, և մենք նրա մասին հիշատակության ենք հանդիպում դեռևս 958 թ.[14]: Հայոց թագավոր Սմբատ [I]-ը († 913) Ատրներսեհ Կյուրոպաղատին թագադրել է 899 թ.: Վերջինս նույն բանն է արել Աշոտ Երկաթի՝ Սմբատի որդու և հաջորդի համար: Միևնույն եղանակով Դավիթ մագիստրոսը՝ Ատրներսեհի որդին, թագադրել է Աղվանքի իշխանին: Դա նշանակում է, որ Դավիթը ներկայանում է իբրև Տայքի տեր ու տնօրեն, Ատրներսեհի հաջորդ, կյուրոպաղաս և թագավոր: «Վրաց ժամանակագրությունը» նրան իրավամբ դասել է Տայքի կյուրոպաղատ-թագավորների շարքը:

Աշոտ Կյուրոպաղատին հաջորդել է նրա չորրորդ եղբայրը՝ Սմբատը, որը թագավորել է 954–958 թթ. և իշխանությունը թողել իր եղբայր Բագրատի որդի Ատրներսեհին: Այնուհետև իշխանությունն անցել է Սմբատի որդուն, որի անունը ևս Ատրներսեհ էր: Վերջինս մահացել է 983 թվականին «թողնելով Դավիթ անունը կրող մի երիտասարդ որդու»[15]: Դա մեզ

---

12 Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին. գիրք Գ. գլուխ ԻԳ. Մոսկվա, 1860 էջ 273–274 [«Ի նոյն ամի և որ Յունացն էր մագիստրոս՝ Դաւիթ կոչեցեալ անուն, թագ զարմանաղան և ծիրանիս թագաւորական առաքէր 'ի պատիւ և 'ի գովեստ աստուածայաջող առնն այնորիկ»]:

13 Տ[ե՛ս] [N. A d o n t z]. Asot Erkat [ou de fer, roi d'Armenie de 913 a 929].– "Annuaire de l'Institut de Philologie et d'Histoire Orientales". T. III. [Bruxelles,] 1935.

14 Նրա մասին հիշատակություն կա Անանիա [Ա Մոկացի] կաթողիկոսի Նամակներում («Արարատ», 1897, մարտ): Տես՝ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս լեալ իցէ ձեռնագրութիւնն արտաքոյ Սուրբ Հուսաւորչի Աթոռոյն»]:

15 M. B r o s s e t. [նշվ. աշխ.,] էջ 285:

հետաքրքրող Դավիթ Կյուրոպաղատն է: «Վրաց ժամանակագրությունը» կտրական է այս հարցում: Ջնայած նրա պարբերական հավաստիացումներին[16], հարկ կա դրանում կասկածել: Հիրավի, եթե 983 թ. Ատրներսեհի մահվան պահին նրա որդի Դավիթը դեռևս երիտասարդ էր, ինչպե՞ս կարելի է բացատրել, որ Դավիթը ներկայանում է իբրև կյուրոպաղատ արդեն Վարդաս Սկլերոսի ապստամբության ժամանակ 978 թ., այն է՝ իր հոր կենդանության օրոք: Այնուհետև՝ 983 թ. կարծեցյալ երիտասարդ Դավիթն իր մահվան պահին՝ 1000 թ., չէր կարող դիտվել իբրև «այր ծեր եւ անցեալ զաւուրբք», ինչպես այդ հավաստում է ժամանակակից պատմիչ Ասողիկը*:

Թվում է, թե տեղի է ունեցել խառնաշփոթ: Սմբատի հաջորդ Ատրներսեհ Կյուրոպաղատն իր օրերն ավարտին է հասցրել 961 թ. մի վանքում, ուր նա վտարվել էր իր երկու որդիների՝ Բագրատի և Դավթի կողմից: Այս Բագրատը՝ էրիսթավների էրիսթավը, մահացել է 966 թ. և նրա եղբայր «Դավիթ Կյուրոպաղատը դարձել է Մեծ», ինչպես նշում է «Վրաց ժամանակագրությունը»[17]:

Նշումն այն մասին, որ Դավիթը դարձել է Մեծ, ստիպում է կարծելու, որ այդ նա է նշանավոր Դավիթը և ոչ թե Սմբատի թոռ Դավիթը:



Էրիսթավների էրիսթավի տիտղոսի արժանացած Բագրատը մահացել է 966 թ.: Նրա եղբայր Դավթի, որը դարձել է Մեծ, մահվան տարեթիվը նշված չէ, մի բան, որն արժանի է ուշադրության[18]: Թորթումի մոտ գտնվող Օշկի վանքում կա վրացերեն մի արձանագրություն, որը փորագրված է արտաքին դռան վերին մասում, որտեղ հիշատակված են Ատրներսեհ Կյուրոպաղատը, էրիսթավների էրիսթավ Բագրատը և Դավիթ մագիստրոսը[19]: Մենք կարծում ենք, որ ի դեմս նրանց խոսքը վերաբերում է Ատրներսեհ Կյուրոպաղատին, որը թագավորել է 958–961 թթ. և նրա երկու որդիներին՝ Բագրատին ու Դավթին: Բագրատն այստեղ կրում է այն տիտղոսը, որը նրան է վերագրում «Վրաց ժամանակագրությունը»: Այդ միակ Բագրատն է, որը հայտնի է իբրև էրիսթավների էրիսթավ տիտղոսակիր: Արձանագրությունը թվագրվում է, այսպիսով, 958 թ. մինչև 961 թ.: Դավիթն այնժամ մագիստրոս էր: Կյուրոպաղատի տիտղոսը նրան է անցել

16 Նույն տեղում, էջ 287, 291:

* [Ա ս ո ղ ի կ. նշվ. աշխ., էջ 270]:

17 M. B r o s s e t. [նշվ. աշխ.,] էջ 284-285:

18 Ձեռագրերից մեկի համաձայն, Բագրատը մահացել է 969 թ., իսկ Դավիթը՝ 966 թ. (M. B r o s s e t. [նշվ. աշխ.,] էջ 285, ծանոթագրությունը):

19 Ն. Ս ա ր գ ի ս ե ա ն. Տեղագրութիւնք [ի Փոքր եւ ի Մեծ Հայս. Վենետիկ, 1864], էջ 88:

իր հոր մահից հետո՝ 961 թ.: Այդ նա է նշանավոր Դավիթ Կյուրոպաղատը, որը կարող էր իշխել գրեթե 40 տարի՝ 961 թ. մինչև 1000 թ.: Այս պարագայում նա կարող էր 978 թ. լինել բավական ազդեցիկ՝ Վարդաս Փոկասի մոտ իր վարկը բարձրացնելու համար և 1000 թ. կարող էր, հավանաբար, լինել խիստ տարեց:

ԿՅՈՒՐՈՊԱՂԱՏԻ ՏԻՐՈՒՅԹԸ

Դավիթն, ինչպես և իր նախորդները, իշխում էր Տայքում, այն է՝ Օլթիի տարածաշրջանում: Հայ պատմիչները նրան անվանում են Տայքի իշխան կամ կյուրոպաղատ: Ըստ «Վրաց ժամանակագրության», Դավթի «տիրապետության տակ էին գտնվում Բասենը, Տայքը և հարակից տարածքները»:

[Կոստանդին Ծիրանածինի] «Արար[ողությունների մասին]» գիրքը նրան անվանում է կյուրոպ[աղատ] Ἰβηρίας և նշում, որ նա իր շուրջն ունեցել է չորս իշխանություններ. ἔχει δὲ περὶ αὐτὸν ὁ κουροπαλάτης ἑτέρας ἐξουσίας δ'. εἰς τὸν ἄρχοντα τοῦ Βεριασάχ. Ἰβηρία,

ἄρχων τοῦ Καρνατάης, Ἰβηρία

ἄρχων τοῦ Κουελ, Ἰβηρία

ἄρχων τοῦ Ἀτζαρᾶ, Ἰβηρία:

Այս իշխանությունները կյուրոպաղատի ենթակայության ներքո չէին գտնվում: Դրանք անկախ էին, համենայն դեպս ճանաչվել էին իբրև այդպիսիք բյուզանդական արքունիքի կողմից, ուղղակի հարաբերություններ ունեին բյուզանդական արքունիքի հետ՝ միևնույն հիմունքներով, ինչ և կյուրոպաղատը:

Ἀτζαρᾶ-ն համապատասխանում է այսօրվա Աջարիային, տեղադրվում միևնույն անունը կրող գետի ավազանում:

Կուելն, իհարկե, այն ամրոցն է, որը վրացերեն անվանվում է «Քվելիսցիխե»՝ «Պանրաբերդ», ըստ Կոստ[անդին] Ծիր[անածինի]՝ Τυρόκαστρον: Մենք վերը տեսանք, որ այս ամրոցն, Աջարայի հովտի հետ, պատկանում էր Գուրգեն մագիստրոսին, որը և նա փոխանակել է Արտանուջի հետ: Այստեղ Կուելը և Աջարան միանգամայն ղանաղան երկու իշխանական տիրույթներ են:

Καρνατάης-ը «Վրաց ժամանակագրության» Տաոս-Կառին է: Ճշգրիտ ձևն է «Կարնի-Տայս», որը նշանակում է «Տայքի գուներ»: Վրացական «Տաոս-Կառի» ձևը նշանակում է «Տաոի (Տայքի) դուռ», որն, այսպիսով, միանգամայն համանման է: Այս բնակավայրն իբրև դյուղ գոյությունը պահպանում է մինչ մեր օրերը և հարևան երկու գավառների՝ Տայքի ու Կղարջքի սահմանագծում՝ 2520 մ բարձրության վրա գտնվող լեռնանցքի կողքին է: Կարնի-Տայսը, որն այլ կերպ կոչվում է Ստորին Տայք, մեր հեղինակի ժամանակաշրջանում կազմում էր Կղարջքի, Լմերքսևի գետի հովտի մի մասը՝ Արտանուջ նշանավոր ամրոցի հետ:

Կարնի-Տայսի կամ Տաոս-Կառի գծի հարավում ձգվում էին կյուրոպաղատի տիրույթները և ընդգրկում Օլթի գետի ողջ ավազանը, այն է՝ գրեթե ամբողջ Տայք երկրամասը: Ըստ հայ[կական] «Աշխարհ[ացույցի]», Տայքն

ընդգրկում էր ութ գավառ. 1) Կոդ, 2) Բերդաց փոր, 3) Պարտիզաց փոր, 4) Ճակատք, 5) Բոխա, 6) Ազորդաց փոր, 7) Արսեաց փոր, 8) <Ոքաղե>[20]: Արսեաց փորը գտնվում էր Կուրից այն կողմ, Վասքսարի լեռների վրա և կյուրոպաղատի տիրույթից գուրս էր մնում: Վանանդի հարևանությամբ գտնվող Ճակատք գավառը պատկանում էր հայ Բագրատունիներին[21]: Բայց Բասենի հյուսիսային մասը, որը եղերվում էր Արաքսի հոսանքով, պատկանում էր կյուրոպաղատին:

Ինչ վերաբերում է Βερασάχ, իմա՝ Βερασχα, հայ[երեն]՝ «Վերի աշխարհ», դրա ներքո նկատի ունեն այն երկրամասը, որը տեղադրված է Սամցխեից և Ջավախքից դեպի արևելք, Կուր դետի վրա մինչև Տփղիս, ինչպես այդ ճշգրտորեն մատնացույց է անում հայ[կական] «Աշխարհ[ացոյցը]» այն անվանվելով «Վերին աշխարհ»[22]: «Վրաց ժամանակագրությունը» Տփղիսի երկրամասը մինչև Տարիս-Կարնի և Վանավար անվանում է «Զեդասոփելի», այսինքն՝ Վերին աշխարհ[23]:

Բայց ո՞վ էր Βερασάχ-ի ἄρχων-ը Լեկապենոսի և Կոստանդինի օրոք: Կարելի է կարծել, որ Աբազգիայի թագավորը, բայց վերջինս, բացի այդ, հիշատակվում է ἐξουσιαστής Ἀβασγίας անվան ներքո: Հովհաննես [Դրասխանակերտցի] կաթ[ողիկոսն] այս տիտղոսն արտահայտում է «աւագ» բառով: [Իյուղանդիայի] պատրիարք Նիկողայոսը [Հայոց] կաթողիկոսին հղած իր նամակում ակնարկում է կյուրոսլաղատին և «աւագին»*, որը բյուղանդական արարողակարգում համապատասխանում է աբաղդ տիրակալին վերապահված ἐξουσιαστής տիտղոսին: Սակայն թվում է, թե Հովհաննես [Դրասխանակերտցու] ավագն ավելի շուտ վերարտադրում է «բէր» անվանումը, որն Ասողիկի մոտ կրում է աբազգների թագավորը[24]:

---

20 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1904, էջ 145: Ոքաղեն «Գիւղիկ և Վարդաշէն» գյուղերի տարածաշրջանն է: Այս վայրերը մինչ մեր օրերը պահպանել են իրենց անունները Նիքաղեի մոտ, որը բավական հստակորեն հիշեցնում է Ոքաղե անունը և տեղադրվում Թորթում գետի ակունքի մոտ.

21 953 թ. [Հայոց] Աբաս թագավորի մահից հետո նրա երկու որդիները բաժանել են երկիրը և Մուշեղը թագավորել է Վանանդում կարսում: Նրա եղբայր Աշոտը նրանից բռնագրավել է Նատիկ ամրոցը Ճակատքում, որը պատկանում էր Մուշեղին և որը նա հարկադրված է եղել նրան վերադարձնել Դավիթ կյուրոպաղատի ճնշման ներքո: [Տե՛ս] Ա ս ո ղ ի կ. [Նշվ. աշխ.], էջ 188:

22 [Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, յաւելուածովք Նախնեաց, Վենետիկ, 1881], էջ 28:

23 Տարիս-Կաուին կամ Տարիս-Կարնին մեծապես մտահոգել է Բրոսսեին: Վախուշտին դրում է Տաշի-Կարի կամ Տաշիս-Կարի: Բրոսսեն կարծում է, թե դա թաթարերեն «տաշ» «ապառաժ» բառն է ([M. B r o s s e t. Նշվ. աշխ.,] էջ 22): «[Վրաց] ժամանակագրությունը» նշում է, որ Մցխեթոսը ստացել է այն երկրամասերը, որոնք գտնվել են սկսած Արագվիից և Տփղիսից մինչ Տարիս-Կար ու Հանավար ([Նույն տեղում,] էջ 23), և Օձըրխոսը Մցխեթոսի եղբայրը «այն երկրամասը, որը ձգվում է Տարիս-Կարից մինչ ծով», որտեղ «նա կառուցել է Օձըրիե և Թուխարս ամուր քաղաքները» ([Նույն տեղում.] էջ 22): Տարիս-Կարը տեղադրված էր Թուխարսի ու Տփղիսի միջև ու քանի որ Մցխեթոսի բաժինը Արագվիից Տարիս-Կար ներառում է «Վերին աշխարհը» «Զեդա սուիելին» և որ այս երկրամասերն ընդգրկվում էին Սամցխեի և Թիֆլիսի ու Ջավախքի միջև, որը կազմում էր Գոգարենեի մասը, հետևաբար, Տարիս-Կարը հարկ է որոնել Սամցխեից և Ջավախքից դեպի արևելք: Սա մեզ օգնում է ճիշտ տեղադրելու Տաշիրս-Կարը, այն է Տաշիրի դուռը կամ մուտքը, որը համապատասխանում էր այս երկրամասի տեղանքին, սակայն չէր ընդգրկվում «Վերին աշխարհում», թեև դրան սահմանակից էր:

* [«Աւագն Ափխազաց» (տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 267, 268)]:

24 Ա ս ո ղ ի կ. [Նշվ. աշխ.,] էջ 171–173:

Այն իշխանները, որոնց շնորհվում էր կյուրոպաղատություն, վրացիների մոտ անվանվում էին նաև թագավորներ: Ատրներսեհից († 923) հետո թագավորներ այլևս չեն հիշատակվում մինչ Սմբատ թագավորը (954–958): Այս ժամանակաշրջանում աբխազների թագավոր Գեորգի II-ը (921–955) հիրավի գրավել է այն երկրները, որոնք պատկանում էին Վրաստանի թագավորին և իբրև իշխան այդտեղ նշանակել է նախ՝ իր որդի Կոստանդինին, իսկ այնուհետև՝ Լևոնին: Հավանարար, Βεριασαχ-ի ἄρχων-ի ներքո նկատի ունեն վրացական երկրում գտնվող Գեորգիի կուսակալին:

Գեորգիին մեկը մյուսի ետևից հաջորդել են նրա երեք որդիները՝ Լևոնը († 967), Դեմետրեն († 975) և Թեոդոսը, որին 985 թ. փոխարինել է նրա զարմիկ (նրա քույր Գուրանդուխտի որդի) Բագրատը: Այս ամբողջ ժամանակաշրջանում, այն է՝ Ատրներսեհի մահից ի վեր († 923) մինչ 985 թ., Աբազգիան պահպանում էր իր գերիշխանությունն այն երկրների նկատմամբ, որոնց նախկին տիրակալները կրում էին թագավորի տիտղոս: Այդուհանդերձ, Ատրներսեհի չորս որդիները, առնվազն մինչ Աշոտ Կյուրոպաղատի († 954) մահը, որը Կոստանդին Ծիրանածինի ժամանակակիցն էր, բավական հզոր էին, որպեսզի խոնարհվեին Աբազգիայի տիրակալի առջև: Նրանց տիրույթները գտնվում էին Տայքի սահմաններում և հիրավի անկախ էին աբազգներից: Բագրատունիների ընտանիքին պատկանող խնգրո առարկա իշխանությունների տարածքային հենքն ավելի լավ ըմբռնելու համար շահեկան կլինի հետևել նրանց գերիշխանության ներքո գտնվող տարածքի հետագա ծավալմանը:

Վրաց Բագրատունիների օրրանը Կղարջքն էր կամ Կլարջեթին: Համաձայն «Վրաց ժամանակագրության» կողմից վերհանված ավանդույթի, առաջին Բագրատունին եկել հաստատվել է այստեղ: Նրա որդի Ատրներսեհը հանդես է գալիս Արչիլի և նրա որդի ու ժառանգ Ջուանշերի օրոք: Նա հայտնի է իբրև ավատատեր, որն արդեն տիրում է Կլարջեթիին, Շավշեթին, Աջարուին, Նիգալին, Արսեաց-փորին, Արտանին և Ստորին Տայքին: Այս Ատրներսեհի որդի Աշոտն իշխում է այն հողերի վրա, որոնք ձգվում էին «Կլարջեթիից մինչև Կսան»[26]: Այդուհանդերձ, Աշոտը հարկադրված է եղել նահանջելու արաբական ուժերի առջև: Նա հիմնավորվել է Կլարջեթիում, կառուցել Արտանուջը, հարևան գյուղերը դնելու միջոցով ընդլայնել իր հողերը, գրավել Շավշեթը: Կայսրը ճանաչել է նրա իշխանությունը և նրան շնորհել կյուրոպաղատի տիտղոս[25]:

Այս ամենն, ըստ էության, պատմական հիմք ունի և հաստատվում է Վարդան պատմիչի ստույգ վկայությամբ, համաձայն որի, «Աշոտ տիրեաց ի Կղարջաց մինչեւ ի Տփղիս, լեռնակողմամբ հանդերձ»[27]: Վրացական ավանդույթն Ատրներսեհին է վերագրում այն, ինչը փաստորեն պատկանում էր նրա որդի Աշոտին: Վերը թվարկված երկրներն Ատրներսեհի տիրապետության տակ չէին գտնվում: Այդ Աշոտն էր, որը դրանք ուներ իր տիրապետության ներքո. Կլարջեթիից Կսան կամ Տփղիս ձգվող երկրամասերը, ներառյալ Ջավախքը. սրանք հենց այն երկրամասերն են, որոնք վե-

25 [M. B r o s s e t. Նշվ. աշխ.,] էջ 269:
26 [Նույն տեղում,] էջ 264:
27 [Վ ա ր դ ա ն. Նշվ. աշխ.,] էջ 78:

բագրվում են Ատրներսեհին: Արաբների դիմադրությունն Աշոտին անտեղի էր: Աշոտի գործունեությունը ծավալվել է ոչ այնպես, ինչպես այն ներկայացվում է «Վրաց ժամ[անակագրության]» կողմից: Նա սկսել է Կյսրջեթիից, ծավալել իր տիրույթները դեպի հյուսիս և արևելք: Հետևաբար, «Իսմայելի իշխանը Վրաց երկիրը տալիս է Աշոտին՝ Հայոց իշխան Աշոտի որդի Վասակի, նրա որդի Ատրներսեհի որդուն», ինչպես հավաստում է միևնույն Վարդանը, ավելացնելով, որ կայսրն իր կողմից նրան արժանացրել է կյուրոպաղատի պատվին[28]:

Աշոտն իր տիրույթները բաժանել է երկու որդիների՝ Ատրներսեհի և Բագրատի միջև: Առաջինին բաժին է հասել Կլարջեթին, Շավշեթը, Աջարիան՝ այն երկրամասերը, որոնք, ինչպես տեսնում ենք, նրա հետնորդների կամ մամփալների ճյուղի տիրույթներում էին: Այս Ատրներսեհի երկու որդիներից Սմբատ մամփալը († 889) հիշատակվում է իբրև Արտանուջի, իսկ Գուրգեն մամփալը († 891)՝ Շավշեթի և <Աջարիայի> տիրակալ: Հիրավի, Ռոմանոսի և Կոստանդինի օրոք մենք տեսնում ենք նրանց թոռներին՝ համապատասխանաբար Աշոտ Կիսկասիին († 939) և Գուրգեն մագիստրոսին († 941)՝ մեկին իբրև Արտանուջի, մյուսին՝ Աջարիայի տիրակալի:

«Վրաց ժամանակագրությունը» չի հիշատակում Աշոտ Կյուրոպաղատի մյուս որդու՝ Բագրատի, որին անվանում է թագավոր, ինչպես նաև նրա որդի Դավթի († 881) և նրա թոռ Ատրներսեհի († 923) տիրույթների մասին: Սակայն, քանի որ Աշոտ Կյուրոպաղատն իր տիրապետության ներքո ուներ Կղարջքից Տփղիս ձգվող երկրամասերը, Բագրատի բաժինը կարող էր լինել այն, ինչը մնացել է այն հողերից դուրս, որոնք բաժին էին հասել նրա եղբայր Ատրներսեհին, այն է՝ այն տարածաշրջանները, որոնք տեղագրված են Կղարջքից և Աջարիայից արևելք մինչև Տփղիս: Հարկ է նաև ավելացնել Ստորին Տայքը, որը, համաձայն «Վրաց ժաման[ակագրության]», ընդգրկվում էր Աշոտ Կյուրոպաղատի տիրույթների մեջ: Ստորին Տայքը՝ Տայքի՝ Ստորին Օլթիի և Կլարջեթիի միջև գտնվող մի մասն է, այսպիսով, բուն Տաոս-Կառիի տարածաշրջանը, որն ավելի ուշ, ինչպես մենք տեսանք, կկցվի Կլարջեթիին: Այս ժամանակաշրջանում Տայքը գեռևս պատկանում էր հայ Բագրատունիներին: Ըստ Վարդանի, Աշոտ Մսակերը (Կանիվորը) և նրա եղբայր Շապուհը՝ Աշոտ Կյուրոպաղատի ժամանակակիցները, «գրաւեցին յինքեանս զՇիրակ եւ զԱշոցք, եւ զգաւառն Տայոց»[29]: Աշոտ Մսակերն այնտեղ [վերա]կառուցել է Կա<լ>մախ ամրոցը: Այս Շապուհի որդի Աշոտն իշխում էր սույն տարածաշրջանում, կայսր Թեոփիլոսի օրոք իբրև նստավայր ունենալով Սպեր [գավառի Բարերդ] քաղաքը, որն իր արևելյան արշավանքի ժամանակ, 837 թ. շրջանում, նրան շնորհել է πατρίκιος καὶ ἀνθύπατος-ի տիտղոս[30]: Միքայել [III]

28 [Նույն տեղում,] էջ 77: [«Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրներսեհ որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան եւ կայսրն առաքէ նմայ պատիւ կիւրոպաղատութեան»]:

29 Նույն տեղում, էջ 76:

30 Ա ս ո ղ ի կ. [Նշվ. աշխ.,] էջ 144:

կայսեր օրոք, 850 թ. շրջանում, ոմն Գրիգոր, որին արվել էր Իշխանիկ մականունը[31], Սպերի տեր ու տնօրենն էր: Ամեն ինչ մղում է հավատ տածելու, որ Տայքը մնացել է հայ Բագրատունիների ձեռքում ողջ IX դ. ընթացքում և X դ. սկզբում՝ մինչ Սմբատ թագավորի († 913) մահը: Վրաց Բագրատունիներն Աշոտ Կյուրոպաղատից հետո մեծ հաջողություններ չեն ունեցել: Այն, ինչ «Վրաց ժամանակագրությունն» է պատմում արաբական ուժերի առջև Աշոտ Կյուրոպաղատի նահանջի մասին, իրականում վերաբերում է նրա հաջորդներին, որոնք Կլարջեթիի իրենց տիրույթներն են նահանջել ավելի նվազ արաբական ուժերի ճնշման ներքո, քան երկու մրցակից՝ աբխազական և հայկական պետությունների ուժերն էին, «որոնք վիճարկում էին, ինչպես հավաստիացնում է «Վրաց ժամանակագրությունը»», Քարթլին», այն է՝ Աշոտ Կյուրոպաղատի արևելյան տիրույթները: Քարթլիի համար մղվող այս պայքարի արդյունքում հայ Բագրաաունիները առաջացել են մինչև Սամշվիլդե ու Սաքուրեթի, դառնալով Տաշիրի, Վրաց դաշտի, Աշոցքի տեր ու տնօրենը և X դ. վերջին, հարակից երկրամասերի ընդգրկմամբ, դրանցից ստեղծել մի իշխանություն: Աբխազները գրավել են Կուր դետից դեպի այն կողմ ձգվող Վրաստանը. Տփղիսը և նրա արվարձանները գտնվում էին արաբ ամիրայի ենթակայության ներքո: Կյուրոպաղատների ճյուղի վրաց Բագրատունիներին մնացել են միայն Սարաքսեթին ու Արտանը (Արդահանը) և Տայքի կամ Տաոս-Կառիի մի մասը: Մամփալները շարունակում էին տիրել Կլարջեթիի իրենց տիրույթներին Աջարիայում՝ Կյուրոպաղատյան տունը տեսնելով, թե ինչպես է ինքն Արևելքի կողմից սեղմվում, իր սահմաններն ընդլայնում է դեպի հարավ: Ատրներսեհ Կյուրոպաղատը՝ Աշոտ Կյուրոպաղատի երրորդ հաջորդը, թվում է, թե առաջինն է հատել Տաոս-Կառիի դիծը՝ Բանա ամրոցը (ժամանակակից Պանենը) Տայքում կառուցելու համար[32]: Ատրներսեհը հայոց թագավոր Սմբատ [I]-ի բարեկամը և դաշնակիցն էր, որը նրան թագադրել էր իբրև [Վրաստանի] թագավոր: Հավանաբար Սմբատի մահից հետո էր՝ 913 թ., և այն դժվարին պայմաններում, որոնցում գտնվում էր նրա որդին ու հաջորդը՝ Աշոտ Երկաթը, որ Ատրներսեհը ոտնձգություն է կատարել Տայքի նկատմամբ: Փոքր անց ժամանել են նրա խիզախ որդիները՝ ամբողջ Տայքն իրենց ենթակայության ներքո դնելու և կայսրությունից Բասենը վիճարկելու համար: Զորս եղբայրներից Աշոտ Կյուրոպաղատն († 954) ու Դավիթ մագիստրոսը († 937) ժառանգներ չեն թողել [տե՛ս տոհմածառը]:

---

31 Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց. ի լոյս էած Ք. Պ. Ս. Պետերբուրգ, 1877, էջ 194: «Գաղտաբար իշխանիկը» պետք է ուղղվի. ոչ թե [«Գայլաբար» կամ] «Գաղտաբար», ինչպես առաջարկում է Մարկվարտը [տե՛ս Յ. Մ ա ր կ ո ւ ա ր տ. Հայ Բագրատունեաց ճյուղագրությունը. Վիեննա, 1913, ծանոթագրություն 3], այլ «Գրիգոր իշխանիկ»:

32 M. B r o s s e t. [նշվ. աշխ.,] էջ 270:



«Վրաց ժաման[ակագրությունը]» Բագրատի որդի Ատրներսեհի մասին նշում է, որ նա կյուրոպաղատ էր, և որ նրա որդի Բագրատը մահացել է 969 թ., և որ էրիսթավների էրիսթավ Դավիթը՝ այս Բագրատի եղբայրը, մահացել է 966 թ.[33]: Սակայն համաձայն մեկ այլ մեկնակերպի, Ատրներսեհը «թողել է երկու որդի՝ Բագրատին և էրիսթավների էրիսթավ Դավթին: Այս Բագրատը, էրիսթավների էրիսթավը՝ Ատրներսեհ Կյուրոպաղատի որդին, մահացել է 966 թ. և նրա եղբայր Դավիթ Կյուրոպաղատը գարձել է Մեծ»[34]: Մենք գիտենք, որ 978 թ. Վարդաս Փոկասը գիմել է Դավթին՝ Վարդաս Սկլերոսի դեմ իրեն օգնական ուժեր ուղարկելու համար: Այս պարագայում Ասողիկը նրան անվանում է կյուրոպաղատ, այնժամ երբ [Գեորգիոս] Կեդրենոսը նրան բնութագրում է իբրև αρχων, բայց անվանում կյուրոպաղատ այն հատվածում, որտեղ խոսքը վերաբերում է նրա ժառանգությանը: Այդուհանդերձ, եթե 978 թ. նա կյուրոպաղատ էր և ամեն դեպքում ակնառու իշխան, նա չէր կարող լինել Ատրներսեհ Կյուրոպաղատի որդին, որը 978 թ. դեռևս կենդանի էր և այսպիսով, այդ նրան է, որ Վարդասը պետք է դիմեր և ոչ թե նրա որդուն: Փոխարենը՝ ընդունելով, որ նա եղել է մյուս Ատրներսեհ Կյուրոպաղատի († 961) որդին և հաջորդել է իր եղբայր Բագրատին († 969) ու «դարձել Մեծ», կարելի է ավելի դյուրին ձևով մեկնաբանել այն ամենն, ինչ մենք գիտենք այս անձնավորության մասին: Այն մեծ հեղինակությունը, որը նա վայելում էր, նրա տարեց հասակը 998 թ., ինչպես հավաստում է Ասողիկը, հակում է կարծելու, որ նա թագավորել է բավական երկար և այսպիսով, նրա թագավորության սկիզբն ավելի համապատասխանում է 969 թ., քան 983 թ.: Բացի դրանից, այս պարագայում, ոչնչով չի կարելի առարկել այն բանին, որ Վարդասը գիմել էր նրան: Ըստ «Վ[րաց] ժաման[ակագրության]»՝ Սմբատին († 958) հաջորդել է նրա որդի Բագրատ Հիմարը, որը և թագավորել է մինչև 994 թ.: Նա, այսպիսով, Դավիթ Կյուրոպաղատի ժամանակակիցն էր: Եթե նա այս Բագրատի զարմիկն էր, որը թագավորական տիտղոս էր կրում, ապա դժվարություններ կառաջանան Դավթի կատարյալ անկախ դիրքորոշումը մեկնաբանելու հարցում: Բագրատի մահից հետո նա չի հավակնում նրա գահին: Սա դրդում է կարծելու, որ նա ավելի հեռավոր ազ-

33 [Նույն տեղում,] էջ 280:
34 [Նույն տեղում,] էջ 284:

գակցական կապ և օրինական առանձին տիրույթներ ուներ: Նրան ներկայացրել են իբրև Բագրատ Հիմարի թոռ Բագրատի առավել մերձավոր ազգականի՝ ավելի լավ ամրագրելու համար նրա իրավունքները կյուրոպաղատի ժառանգության նկատմամբ: Իրականում, նա Դավթի հորեղբոր թոռը չէր, այլ Դավթի պապի ծոռը:

Դավիթ կյուրոպ[աղատի] տիրույթների կենտրոններն Օլթի և Նամրվան (ըստ թուրքական քարտեզների՝ Նարիման) քաղաքներն էին: ...*

Այն, ինչ թվում է, թե հավաստում է Հովհաննես [Միանձն] և Եվթիմեոս ս[րբեր]ի վարքը՝ ցմահ հիմունքներով տարածքային զիջման շուրջ, որը 979 թ. [Վասիլ II] կայսեր կողմից արվել է Դավիթ [կյուրոպաղատին], իրականում արտացոլում է միայն 991 թ. համաձայնության լայնահուն վերհուշը, համաձայն որի Դավթի տիրույթները վերածվում էին ցմահ ավատների:

Դա մի բռնի արարք էր, որը վրիժառու տիրակալը կատարել է Դավիթ Կյուրոպաղատի նկատմամբ: Իհարկե, պետք չէ որևէ հավատ ընծայել այն բանին, որ վերջինս ժառանգներ չի ունեցել և կամ կարող էր իր տիրույթները զիջել կամովին: Ժառանգները չէին, որոնց պակասը նա զգում էր: Ի գեպ, համաձայն «Վրաց ժամանակագրության», նա իբրև ժառանգ մատնանշել էր իշխան Բագրատին՝ իր հեռավոր ազգականին, աբազգների թագավորին և Վրաստանի գահի ժառանգորդին, որն այդ ժամանակաշրջանում զբաղեցնում էր նրա հայր Գուրգենը: Թվում է, թե ո՛չ Դավիթը, ո՛չ էլ նրա շրջապատը, լրջորեն չէին վերաբերվում կատարված գործարքին և այն դիտում էին իբրև անցողիկ խոստում՝ հանդարտեցնելու համար կայսեր զայրույթը: Իրականում, Դավիթն այդ պահից ի վեր վարել է զավթողական քաղաքականություն: Կարո՞ղ էր արդյոք նա խորհել նոր նվաճումների մասին, եթե նրա տիրույթների վախճանը կանխորոշված էր կամ եթե նա հավատում էր իր պարտավորությունների անիրագործելիությանը: Մանազկերտի քուրդ իշխան Բատը մահացել է 991 թ., այսպիսով, այն տարում, երբ Դավիթն իր տիրույթները կայսրությանն էր կտակում: Նրան հաջորդել է նրա զարմիկ Աբու Ալի Հասան իբն-Մրվանը: Դավիթն իր զորքերն անմիջապես առաջնորդել է գեպի Մանազկերտ քաղաք և գրավել այն: Այդ իսկ պահից նրա և մահմեդական ամիրաների միջև սկիզբ է առել երկարատև պայքար: Մրվանյանը նեցուկ է գտել ի դեմս Ատրպատականի Մամլան ամիրայի՝ Աբու-լ-Հայջա-Ռավվադյանի որդու: Դավթի դաշնակիցներն էին քրիստոնյա թագավորներ Գագիկ Անեցին, Աբաս Կարսեցին, Բագրատ Իբերացին: Երկու կողմերը հանդիպել են Բագրևանգում գտնվող Վաղարշակերտ [քաղաքում]: Մահմեդականները չեն համարձակվել ճակատամարտի մեջ ընդդրկվել և նահանջել են: Քանի որ Բագրատը մահացել է 994 թ., ապա այդ հանդիպումը կարող էր տեղի ունենալ 991 և 994 թվականների միջև:

Իբն ալ-Ասիրը հաղորդում է, որ բյուզանդական կայսրը [Ռումի թագավորը] մտել է Հայաստան և ըստ հիջրայի թվարկության 382 թ. (9-ը մարտի 992 թ.–25-ը փետրվարի 993 թ.) պաշարել Խլաթը, Մանազկերտն ու

* [Այստեղ ձեռագիրն ընդհատվում է. բացակայում են բնագրի 26–38-րդ էջերը]:

Արճեշը, չի հանդիպել որևէ դիմադրության ու Աբու Ալի Հասան իբն-Մրվանի հետ տաս տարով հաշտություն կնքելուց հետո հեռացել է այդ-տեղից*: Քանի որ այդ թվականին Վասիլն Արևելքում չի գտնվել, իրավամբ ընդունելի է համարվել, որ խոսքը վերաբերում է Դավթի այն արշավանքին, որի մասին հիշատակում է Ասողիկը[35]: Արաբները նրան դիտում էին իբրև կայսեր գործակալի:

Մի քանի տարի անց՝ 998 թ., Դավիթ Կյուրոպաղատը Խլաթի մոտ հայտնվել է Մումահիդ ալ-Դաուլա Աբու Մանսուր Սաիդի՝ Աբու Ալի Հասան իբն-Մրվանի եղբոր դեմ հանդիման: Քանի որ նա 997 թ. սպանվել էր Ամիդում, նրա եղբայրը և հաջորդը խտխտել էր հաշտությունը: Դավիթը մարտի է բռնվել ըստ հայոց թվարկության 447 թվականին, զատկի օրը՝ 998 թ. ապրիլի 17-ին և կորուստներ կրելով նահանջել: Բագրատ մագիստրոսը՝ Թոռնիկի [եղբոր] որդին զոհվել է ճակատամարտի դաշտում, իսկ իշխանաց իշխան «զԲակուրանն ու զայլս բազումս» գերի են ընկել թշնամու ձեռքը[36]:

Հաջորդ տարի Դավիթը վերջին ընդհարումն է ունեցել Ատրպատականի մահմեդական Մամլան ամիրայի հետ, որը Հայաստան էր ներխուժել ստվար բանակի գլուխ անցած: Նրա փառամոլությունը հասնում էր այնտեղ, որ նա երազում էր գրավել Հայաստանն ու Վրաստանը, իսկ Մանազկերտի ավերման դիմաց ծրագրում էր առնվազն Տայք երկրամասի ասպատակումը: Դավիթը նրա դեմ է ուղարկել իր և իր դաշնակիցների՝ Հայաստանի թագավորի, Կարսի թագավորի ու Վրաստանի թագավորի զորքերը: Ճակատամարտը տեղի է ունեցել Ծմբո գյուղի մոտ՝ Ասլահունիքի կամ Մանազկերտի տարածաշրջանում, ըստ հ[այոց] թ[վարկության] 448 (998) թ.[37], չհանգեցնելով վճռական արդյունքի: Դա նշանակում է, որ [Մանազկերտ] քաղաքը մնացել է Դավթի տիրապետության ներքո: Մի փոքր անց Դավիթը մահացել է, և կայսրը ժամանել է իր ժառանգությունը ստանալու համար: Եգիպտոսի Ֆաթիմյան ամիրապետ Ալ-Ազիզի որդին և նրա հաջորդը՝ Ալ-Հակիմ բի-Ամրիլլահ Մանսուրն (996–1020) արշավանք է ձեռնարկել Անտիոքի տարածաշրջան և ճակատամարտել գուքս Դամիանոս Դալասինոսի հետ ու սպանել նրան՝ նրա որդու հետ և գերեվարել պատրիկ Զորտուանելին 998 թ. հուլիսի 19-ին: Սա հարկադրել է Վասիլ [II] կայսրին գնալու Արևելք: 999 թ. սեպտեմբերի 20-ին նա արդեն գտնվում էր Անտիոքի մոտ, իսկ դեկտեմբերի 6-ին՝ Տրիպոլիում: Ասողիկը նշում է, որ Ասորիքում նա մնացել է Խաչվերաց տոնից Ծննդյան և Աստվածահայտնության օրը, այսպիսով՝ սեպտեմբերի 14-ից 1000 թ. հունվարի 6-ը: Այնուհետև՝ նա անցել է Տարսոն, ուր, ըստ Ցահյայի, մնացել է վեց ամիս, այսպիսով՝ 1000 թ. հունվարի 6-ից հուլիսի սկիզբը: Տեղեկանալով կյու-

---

* [Ibn el-Athiri. Chronicon quod perfectissimum inscribitur. ed. C. J. Tornberg. Lugduni Batavotum, 1851-1876].

35 В. Р. Р о з е н. Император Василий Болгаробойца. [СПб., 1883], с. 247.

36 Ա ս ո ղ ի կ. [Նշվ. աշխ.], էջ 269:

37 Նույն տեղում, էջ 271: Ասողիկը հիշատակում է 447 (998) թ., Արեգի մեկը, երեքշաբթի օրը, որը ճշգրտորեն համապատասխանում է 998 թ.: Սակայն Պողոսի Թղթերի ընդօրինակողն իբրև այս ճակատամարտի տարեթիվ նշում է 448 (999) թ.: [Տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն.] Հայապատում. [հ.] Բ. [Վենետիկ, 1901,] էջ 155:

րոպաղատի վախճանի մասին, Վասիլը թողնում է Տարսոնը՝ Դավթի տիրույթները գնալու համար: Վերջինս, համաձայն Ասողիկի, մահացել էր, ըստ հ[այոց] թ[վարկության] 449 թ. դատկի օրը, որը համապատասխանում է 1000 թ. (և ոչ թե 1001 թ., ինչպես այդ մատնացույց է անում «Վրաց ժամանակագրությունը») մարտի 31-ին: Վասիլը հուլիսի սկզբին թողել է Կիլիկիան Մելիտինե գնալու համար, հատել Եփրատը, Հանձիթի տարածաշրջանը, Բալուն, Պայծառակերպման տոնին (1000 թ. հուլիսի 7-ին) անցել Կոհեր լեռը և կանգ առել Արշամունիքում գտնվող Երիղայում: Նփրկերտի (Մուֆարկինի) ամիրան՝ Բատի դարմիկը, այն է՝ Աբու Մանսուր Մրվանյանը ներկայացել է կայսրին, արժանացել մեծարանքների և նշանակվել Արևելքի դուքս՝ մագիստրոսի տիտղոսով:

Այնուհետև՝ նա ճանապարհ է ընկել ու հասել Հավճիչ լեռը և համանուն քաղաք: Բագրատը՝ աբաղդների թագավորը, և նրա հայր Գուրգենը՝ իբերների թագավորը, եկել են նրան դիմավորելու. առաջինը մեծարվել է իբրև կյուրոպաղատ, իսկ Գուրգենը՝ մագիստրոս:

Կայսրը շարունակել է իր ճանապարհը և ողջունել հայոց թագավորների՝ Վանանդի Աբասի ու Վասպուրականի Սենեքերիմի ժամանումը: Կայսրը դնացել է Մանազկերտ և շրջվել դեպի Բագրևանդում գտնվող Վաղարշակերտ, որտեղ սպասել է հայոց Գագիկ [I] թագավորի (Անեցու) ժամանումին, բայց նա չի բարեհաճել ներկայանալ**: Այդտեղից կայսրը գնացել է Օլթի և իր տիրապետության ներքո վերցրել Տայքի բոլոր դղյակներն ու բերդամրոցները, դրանցում նշանակել հավատարիմ մարդկանց ու իր հետ տարել Տայքի ազատների մյուս մասին և նրանց տեղավորել բյուզանդական երկրում: Այս ամենից հետո նա վերադարձել է Կ[ոստանդնու]պոլիս:

Կայսրի մեկնումից հետո ժայթքել է Գուրգենի դժգոհությունը կապված Դավթի տիրույթների կողոպուտի հետ և նա վճռել է դրանք վերագրավել ուժի միջոցով: Առանց հաջողության հասնելու նա պաշարել է Օլթին և ճամբարել Նամրվանի (այսօր՝ Նարիմանի) կիրճում[38]: Այս լուրը ստանալուն ևեթ Վասիլն Անտիոքի դուքս Նիկեփորոս Ուրանոսին կարգադրել է շուտափույթ գնալ Գուրգենի դեմ: Նա եկել է միևնույն ճանապարհով, ինչ կայսրը, և ըստ հ[այոց] թ[վարկության] 450 (1001) թ. դիրքեր գրավել Բասենում: Զմռան վրա հասնելուն պես Նիկեփորոսը բանակցություններ է սկսել Գուրգենի հետ և նրան հավաստիացրել, որ կայսրը, հավանաբար, հակված է հարգելու նրա պահանջները: Բասենում գտնվող Մեկոբ լեռան մոտ՝ Աուրբ-Թեոդորոս գյուղում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում հաշտություն է կնքվել: Գուրգենի կողմից իր իրավունքների պահանջը ներկայացնելու տարեթիվը՝ 1001 թ., Արիստակես [Լաստիվերտցին] չփոթել է այն տարեթվի հետ, երբ Դավթի վախճանից հետո կայսրը

---

* [Ա ս ո ղ ի կ. նշվ. աշխ., էջ 275 («վախճանեցաւ յաւուր մեծի փրկական Զատկին, ի Նոթ թուականին»)]:

** [«Այլ նա իբրև փոքրութիւն համարեալ զգալն իւր առ նա»: Տե՛ս նույն տեղում, էջ 277–278]:

38 Ըստ Վարդանի, Դավիթը Վասիլին էր կտակել Օլթին, Նամրվանը, ինչպես նաև Մանազկերտ քաղաքը [տե՛ս Վ ա ր դ ա ն. նշվ. աշխ.,] էջ 93:

1000 թ. ամռան վերջին ձեռք է բերել նրա տիրույթները[39]: Սա ևս, հավանաբար, այն սխալի պատճառն է, որը թույլ է տրվել «Վրաց ժամանակագրության» կողմից և վերաբերում է Դավթի մահվան ու նրա տիրույթները կայսրությանը գիջելու տարեթվին (Բագրատի մահվանից հետո, որը 1014 թ. միավորել էր իր հոր՝ Գուրգենի թագը աբազգների թագի հետ, նրան հաջորդել է նրա որդի Գեորգի [I]-ը): Գուրգենը քաջություն է ունեցել հակադրվելու կայսրության կողոպտչական քաղաքականությանը և ստացել է Դավթի տիրույթների մեծ մասը: Նա մահացել է 1008 թ. և նրա որդի Բագրատը, որն այդժամ աբազգների թագավորն էր, ստացել է իր հոր ժառանգությունը՝ ներառյալ կյուրոպաղատյան տիրույթները: «Վրաց ժամանակագրությունը» հնարավորություն է ընձեռում պնդելու, որ Դավիթը, չունենալով որդիներ, որդեգրել էր այս Բագրատին[40]: Այդուհանդերձ, իմաստ ունի դրանում կասկածել: Միևնույն փաստաթուղթը վկայում է, որ քանզի Դավիթը զավակներ չի ունեցել, նրա տիրույթներն ավերածությունների են ենթարկվել: Նրա վասալները դրանք հանձնել են Վասիլին: Դավթի իսկական ժառանգորդը Բագրատը չէր, այլ նրա հայր Գուրգենը՝ Վրաստանի թագավորը: Հիրավի, այդ նա է, որն իր իրավունքները պահանջելու համար գիմել էր զենքի և հաջողության հասել: «Վրաց ժամանակագրությունն», ի դեպ, խոստովանում է, որ Գուրգենի մահվամբ Տայքն անցել է Բագրատի տիրապետության ներքո[41]: Այսպիսով, այդ Գուրգենն է և ոչ թե Բագրատը, որը ճանաչվել էր իբրև Դավթի ժառանգորդ: Ըստ «[Վրաց] ժամանակագրության», Դավիթը հայտարարել է, որ «Բագրատը Տայքի, Քարթլիի և Ասլքսարեթի ժառանգորդն է»[42]: Դա ակնհայտորեն հետադա փաստի արտածումն է, երբ Բագրատն այդպիսին էր դարձել, չնորհիվ իր հոր՝ Գուրգենի՝ կայսրությանը ցուցաբերած քաջարի գիմադրության:

Դավիթը սխալվել է զինված առճակատում ունենալով աբազգների թագավոր Բագրատի հետ: Համաձայն Ասողիկի, Բագրատի սլասլ Բագրատ Ռեգվեն [Հիմարն] ամուսնացել է ևս մեկ անգամ և կնոջ ազդեցության ներքո ցանկացել իր որդի Գուրգենին զրկել ժառանգությունից*: Աբազգների թագավոր Բագրատն այդժամ միջամտել է իր հոր՝ Գուրգենի իրավունքը պաշտպանելու համար: Ռեգվենը դիմել է Դավիթ Կյուրոպաղատին: Վերջինս օգնություն է խնդրել Անիի թագավոր Սմբատ [II]-ից, որն իր զորքերն առաջնորդել է իր եղբոր՝ Գագիկի, Կարսի թագավոր Աբասի և Սյունիքի ու Աղվանքի իշխանների հետ. կյուրոպաղատին միանալու են եկել նաև Վասպուրականի զորքերը: Հենց որ այս ուժերը հայտնվել են Ջավախքի Դլիվեկ գյուղում, Բագրատն ու նրա որդի Գուրգենը հաշտություն են խնդրել և նահանջել: Իբրև ցուցաբերած օգնության դիմաց փոխհատուցում, Սմբաթը ստացել է Սակուրեթ [Սկվիրեթ] ամրոցը[43]: Դա տեղի է ունեցել ըստ հ[այոց] թ[վարկության] 437 (988) թ.:

---

39 Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ. Թիֆլիս, 1912, էջ 3:
40 M. B r o s s e t. [Նշվ. աշխ.,] էջ 292, 295:
41 Նույն տեղում, էջ 298:
42 Նույն տեղում, էջ 294:
* [A s o n d i k. Նշվ. աշխ., էջ 252]:
43 Նույն տեղում:

«Վրաց ժամանակագրությունն» այս առճակատումը ներկայացնում է փոքր-ինչ այլ երանգներով: Միջադեպի պատճառ է դարձել իշխանաց իշխան Ռատը, որն իշխում էր Թրիալեթի, Մանգլիսի ու Սկվիրեթի տարածաշրջանում և հրաժարվում ենթարկվել աբազգների թագավոր Բագրատին: Վերջինս առաջ է ընթացել դեպի անհնազանդ իշխանը: Այդ մասին տեղեկացրել են Դավիթ Կյուրոպաղատին, ասելով, որ ներխուժումն ուղղված է նրա դեմ և հետապնդում է նրան կործանելու նպատակ: Ներխուժողի հայր Գուրգենը նրան օգնության է շտապել: Դավիթը համախմբել է Հայաստանի բոլոր թագավորներին: Բագրատ Հիմարը՝ Քարթլիի թագավորը, ևս անցել է Դավթի կողմը, «որովհետև երկյուղում էր, որ իր որդի Գուրգենը կարող էր իրեն զրկել թագավորությունից»: Զինված ընդհարումը տեղի է ունեցել Դլիվեկում, ուր Գուրգենը պարտություն է կրել և նահանջել: Թրիալեթից եկող նրա որդի Բագրատը տեղեկացել է, որ ի վիճակի չի դիմակայելու Դավթի դերազանցող ուժերին, անձամբ հաշտություն է խնդրել ու հավաստիացրել Դավթին, որ ինքը նրա դեմ ոչինչ չի ունեցել, այլ հետապնդել է միայն մեկ անհնազանդության համար Ռատին պատժելու նպատակ: Խաղաղությունը վերականգնվել է: Փոքր անց, Բագրատն այնուամենայնիվ վտարել է Ռատ իշխանին:

Դժվար է ըմբռնել այս առճակատման բուն իմաստը: Եթե Թրիալեթիի իշխանն անհնազանդ էր, այդ Բագրատ Հիմարը՝ Վրաստանի թագավորն է, որն իրավասու էր նրան սանձահարելու և ոչ թե Աբազգիայի թագավորը, քանզի Թրիալեթին գտնվում էր Վրաստանի թագավորի տիրույթների սահմաններում: Այս միջադեպն, այնուամենայնիվ, մտացածին չէ: Սակուբեթի հիշատակումն Ասողիկի մոտ լինելով համանման «[Վրաց] ժամանակագրության» Սկվիրեթի՝ Ռատի տիրույթի հետ, հակում է կարծելու, որ Ռատի հետ կապված միջադեպը հայտնի է եղել նաև հայ պատմիչին: Եթե [աբազգների թագավոր] Բագրատը ցանկանում էր խոհեմ դարձնել անհնազանդ իշխանին, Բագրատ Հիմարը՝ իշխանի տեր ու տնօրենը, պետք է գոհ լիներ և ոչ թե սանձահարողի դեմ զենք վերցներ: Հարկադրված ենք ընդունել, որ գահին տիրելու համար Դուրդենն անհամբերությամբ էր սպասում իր հոր մահվանը և հավանաբար իր որդու հրահրմամբ դավադրություն էր կազմակերպել նրա դեմ:

Այդուհանդերձ, կյուրոպաղատը ոտքի է ելել երկու իշխանների՝ իր հավանական ժառանգների դեմ, հանուն արդարության կամ հավանաբար քաղաքական հավասարակշռության շահից ելնելով:

977 թ. հայոց թագավոր Ամբատ [II]-ն իր հորեղբայր Մուշեղից՝ Կարսի թագավորից, զավթել է Շատիկ ամրոցը Ճակատք գավառում: Դավիթը չի հապաղել միջամտել՝ գործադրված բռնության դիմաց արդարությունը վերականգնելու համար[44]:

Դավիթը մեր աղբյուրներում ներկայանում է իբրև օրինակելի իշխան, որի հեղինակությունը նրան դարձնում էր դատավոր և միջնորդ իր շրջապատում գտնվող խռովարար իշխանների միջև տեղի ունեցող վիճաբանություններում: «Վրաց ժաման[ակագրությունը]» նրան որակում է իբրև «գթասիրտ, բարեգութ աղքատների նկատմամբ, կարեկից, խոնարհ

44 Նույն տեղում, էջ 188:

և համեստ վչտահարների հանգեպ, մեծահոգի, մարդկային, բարեհամբույր՝ ամենքի համար և օժտված յուրաքանչյուր բնույթի առաքինութիւններով»[45]: Ըստ Ասողիկի, նա «էր այրն հեզ եւ հանդարտ, առաւել քան զամենայն թագաւորս, որ ի ժամանակս յայս: Եւ եղեւ նա պատճառ խաղաղութեան, եւ շինութեան ամենայն արեւելայց, մանաւանդ Հայոց եւ Վրաց. զի զգոռ պատերազմաց յամենայն կողմանց գադարեցոյց նա, յաղթող եղեալ ամենայն չուրջանակի ազգաց, եւ ամենայն թագաւորք կամաւ հնազանդեցան նմա»[46]: Արիստակես [Լաստիվերտցին] նրան բնութագրում է մեծարանքի խոսքերով. «էր այր հզօր եւ աչխարհաշէն, մեծապարգեւ եւ աղքատասէր, որ էր արգարեւ սահման խաղաղութեան, քանզի յաւուրս նորա հանգչէր ամենայն մարդ, ըստ մարգարէութեանն, ընդ որթով իւրով եւ ընդ թզենեաւ»*:

Այն, ինչ պատմում է Մատթեոս Ուռհայեցին «սուրբ եւ արդար իշխանին Դաւթայ» բռնի մահվան մասին**, պատմական տեսակետից հիմնազուրկ է: Դա լեգենդ է, որը հավանաբար ամփոփում է Ռատի տարածած ասեկոսեների արձագանքը, այն է՝ աբազգների թագավոր Բագրատը ծրագրում էր սպանել մեծ իշխանին: Հայր Իլարիոնի տված թույնի միջոցով՝ նրա մահվան մանրամասները բացարձակապես մտացածին են: ...***

[ԴԱՎԻԹ ԿՅՈՒՐՈՊԱՂԱՏԻ ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԸ]
ԱՊՈՒՔԱՊԻ =Ἀποκάπης ԸՆՏԱՆԻՔԸ

Թոռնիկի հորեղբայրը և նրա եղբայրներից մեկը կրում էին Ապուքապ անունը: Նրա հորեղբայր Ապուքապի աղջիկն ամուսնացել էր Հովհաննես-Աբուլհարիթի հետ: Այս զույգից ծնվել է Եվթիմեոսը: Վրաց մետրոպոլիտ Տիմոթեն, որը 1755 թ. այցելել է Աթոս լեռան վրա գտնվող իբերական վանքը, Եվթիմեոսին համարում է Թոռնիկի քրոջ որդի: Նա, այսպիսով, Թոռնիկի զարմուհուն չփոթել է նրա քրոջ հետ[47]: Այս վկայությունը, որքան էլ, որ այն սխալ լինի, այնուամենայնիվ հավաստում է Թոռնիկի և Ապուքապի միջև գոյություն ունեցող ազգակցությունը:

Հովհան և Եվթիմեոս ս[րբեր]ի վարքում ասված է, թե Հովհաննես-Աբուլհարիթը տեղեկանալով, որ իր որդի Եվթիմեոսը [Դավիթ Կյուրոպաղատի կողմից] պատանդ էր տրվել [կայսրությանը], նրան փրկելու համար գնացել է կայսեր մոտ: Նա այդ առթիվ հանդիմանել է Ապուհարպին, նրան ուղղելով հետևյալ խոսքերը. «Դուք խնայում եք ձեր որդիներին, որովհետև նրանք ձերն են և պատանդ եք հանձնում գրեթե որբ իմ որդուն»: Սրանից հետևում է, որ Ապուհարպն իր դուստրից՝ Հովհաննեսի

---

45 M. B r o s s e t. [նշվ. աշխ.,] էջ 294:

46 Ա ս ո ղ ի կ. [նշվ. աշխ.,] էջ 275: [Հմմտ. էջ 188]:

* [Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի. նշվ. աշխ., էջ 3]:

** [Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի. Ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 37]:

*** [Այստեղ ձեռագիրն ընդհատվում է. բացակայում են բնագրի 46–59-րդ էջերը]:

47 [M.] B r o s s e t. Additions et eclairsissements [a l'histoire de la Georgie depuis l'antiquite jusqu'au 1469 de J.-C. St.-Petersbourg, 1851], p. 190.

կնոջից բացի, նաև որդիներ ուներ: Նա, ով նրան ներկայացրել էր կայսրերին, այդ նույն Ապուհարպն էր, որը ճանաչված էր արքունիքում:

Հիշենք այս երկու փաստերը. Ապուհարպը որդիներ ուներ և նրան ճանաչում էին կայսրերը: Հայտնի է մի «Զորտուանել՝ Ապուհարպի թոռը», որը հիշատակվում է այն ընդհարման զոհերի թվում, որը սանձազերծվել է Վասիլի բանակի ռուս զինվորների և Դավիթ Կյուրոպաղատի մարգկանց միջև 1001 թ.:

Սակայն այս Ապուհարպը թվում է, թե Թոռնիկի հորեղբայրն է, այն է՝ նրա հայր Զորտուանելի եղբայրը.



Վասիլի ժամանակաշրջանում, նրա շրջապատում գտնվող բազմաթիվ ավատատեր [ընտանիքների] թվում կա մեկը, որն իր անունով և ծագմամբ մեծապես հիշեցնում է Ապուհարպին: Դա Ապոկապես Ἀποκάπης *հանրահայտ ընտանիքն է, որի անդամներից մեկը չէ, որն աչքի է ընկել կայսրությանը մատուցած ծառայություններով: Մենք անվարան այդ ընտանիքի ծագումը կապում ենք Ապուհարպի ընտանիքի հետ:*

Այս ընտանիքի մասին առաջին անգամ խոսվել է 1019 թ.: Երբ Վասիլ [II]-ը Դիրաչիումի գրավումով վերջին հարվածն է հասցրել Բուլղարիային և ազատ արձակելով բուլղարների մոտ գտնվող բոլոր հույն գերիներին առաջարկել է բոլոր նրանց, ովքեր այդ ցանկանում էին, մնալ տեղում, իսկ նրանց, ովքեր այդ չէին ցանկանում, հետևել իրեն: Կեդրենոսի[48] *այս վերջին բառերից հետո –* τοῦ δὲ λοιποῦς ἕπεσθαι προσταξας, *Դևոլի եպիսկոպոսն ավելացնում է.* καὶ τῶν ἁλόντων ποτὲ στρατιωτῶν· ἦσαν γὰρ πολλοὶ ἔκ τε Ῥωμαίων καὶ Ἀρμενίων ἔν τε Πελαγονίᾳ καὶ Πρέσπᾳ καὶ τῇ Ἀχρίδι ὑπὸ Σαμουὴλ κατῳκισάμενοι, ὧν ἐπισημότατοι οἱ Βασιλείου τοῦ Ἀποκάπη παῖδες, Γρηγορᾶς καὶ.....*(ջնջված տառեր)* ἦλθεν[49]: *Այսպիսով, գերիների թվում ամենանշանավորներն Ապոկապեսի որդի Վասիլի երկու որդիներն էին:*



48 [G.] C e d r [e n u s. Historiarum compendium. Ioannis siylitzae ope ab Immanuele Bekkero. T.] II. [Bonnae, 1839], p. 474, [47]7.

49 S[ź'u] B. P r o k i č. Die Zusatze in der Handschrift des Johannes Skylitzes. [Munchen]. 1906.

Ապոկապեսը և Վասիլը բյուզանդական պատմության մեջ հանրահայտ անձնավորություններ են: Ապոկապեսը մասնակցել է Ռոմանոս կայսեր 1030 թ. սիրիական արշավանքին, որը նույն տարվա օգոստոսի 10-ին (ինդ[իկտիոնի] XIII, աշխարհի [արարչագործության] 6538 թ.) ավարտվել է պարտությամբ: Այն լավագույն զորավարների թվում, որոնց Ռոմանոսն իր հետ տարել է, Կեդրենոսը հիշատակում է բանակի երեք հրամանատարների՝ պատրիկ Հովհաննես Խալդին, էքսկուբիտոսների զորավար Լևոն Քսերոսպակտին և պատրիկ Կոստանդին Դալասենոսին[50]: Մատթեոս Ուռհայեցին հիշատակում է Ապոկապեսի անունը, այսպիսով՝ չորրորդ հրամանատարի, «որն անցյալում եղել էր Դավիթ Կյուրոպաղատի սենեկապետը»[51]: Այդ նա է, որը փրկել է Ռոմանոսի կյանքը՝ նրան նախազգուշացնելով նրա զորավարների կողմից հյուսվող դավադրության մասին: Կայսրը բանակի կողմից սիրված չէր իր չար բնավորության պատճառով: Արաբները նրա զորքերի նկատմամբ հաղթանակ են տարել և նրանց փախուստի մատնել: Կայսրը նահանջել է Կուրիս և այնուհետև հասել մայրաքաղաք: Ռոմանոսի շրջապատում դոյություն ուներ նրա դեմ ուղղված ակնհայտ թշնամական տրամադրվածություն: Իբն-ալ Ասիրը հաստատում է հայ պատմիչի վկայությունը: Դավադրության հրահրիչը, ըստ նրա, եղել էր դքսի որդին, հավանաբար Կոստանդին Դալասենոսը: Նա հավաստում է, որ զորավարներից մեկը կայսրին հայտնել է նրա դեմ նախապատրաստվող դավադրության մասին: Կայսրը համակվել է սարսափով, ճողոպրել Կուրիս, իսկ այնտեղից՝ Կոստանդնուպոլիս[52]: Արաբ պատմիչը չի հաղորդել զորավարի անունը, բայց հավաստի է, որ խոսքը վերաբերում է միևնույն Ապոկապեսին: Ռոմանոսը, որին որևէ մեկը չէր դավաճանել, ստիպված է եղել նահանջելու, իսկ նրա ճամբարը կողոպտվել է: Երբ ավարով ծանրաբեռնված հաղթողները ժամանել են Թելուշ և պահանջել անձնատուր լինել, Թելուշի թեմի ստրատեգ Գեորգի Մանիակեսը գրոհել է նրանց և հափշտակել նրանց կողոպտած իրերը: Իբրև այդ սխրանքի դիմաց փոխհատուցում՝ Ռոմանոսը նրան նշանակել է κατεπάνω τῆς κάτω Μηδίας[53]:

Հաջորդ տարի՝ 1031 թ., Մանիակեսը դարձել է Եդեսիայի տեր ու տնօրենը: Ըստ Յահյայի, այդ տեղի է ունեցել հոկտեմբեր ամսին[54]: Այդ պահին Մանիակեսը նշանակվում է եփրատյան քաղաքների պրոտոսպաթար և ստրատեգ ու բնակվում Ամոսատում. Γεώργιος πρωτοσπαθάριος ὁ Μανιάκης, ὁ Γουδελίου τοῦ Μανιάκη υἱός, τῶν παρευφρατιδίων στρατηγῶν πόλεων καὶ ἐν Σαμοσάτῳ τὰς οἰκήσεις ἔχων[55]: *1034 թ. (ինդ[իկտիոնի] 3-ին, աշխարհի [արարչագործության] 6543 թ.) այս նույն տարեգիրը հաղորդում է, որ* μεταστέλλεται δ'ἐξ Ἐδέσσης καὶ Γεώργιον πατρίκιον τὸν Μανιάκην καὶ τοῦτον μὲν ἄρχειν ἐκπέμπει τῆς ἀ-

---

50 [G.] C e d r [e n u s. Նշվ., աշխ.,] էջ 491 և այլն:

51 [Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի. Նշվ. աշխ., էջ 57]:

52 Նույն տեղում, էջ 57–58: Իբն-ալ Ասիրը և Քամալ-ադ-Դինը, որոնց հղում է Վ. Ռոզենը. [տե՛ս] B. P. P o з e н. Նշվ. աշխ., էջ 314 և այլն:

53 [G.] C e d r [e n u s]. [Նշվ. աշխ.,] էջ 494:

54 Y a h y [a]. [Նշվ. աշխ.,]; (P o з e н. [Նշվ. աշխ.,]) էջ 72:

55 [G.] C e d r [e n u s]. [Նշվ. աշխ.,] էջ 500:

νω Μηδίας τῆς καὶ Ἀσπρακανίας, ἐν Ἐδέσσῃ δὲ πέμπει Λέοντα τὸν Λε πενδρηνόν[56]:

Այդուհանդերձ, պատմելուց հետո այն պայմանների մասին, որոնցում Մանիակեսը գրավել է Եդեսիան և այն ջանքերի մասին, որոնք նա ներդրել է այն արաբներից պաշտպանելու համար, Մատթեոսը հաղորդում է, ոչ առանց որոշակի դառնության, որ «Ռոմանոսը նրան հեռացրել է և քաղաքը հանձնել Ապոկապեսին՝ Դավիթ Կյուրոսպաղատի սենեկապետին»[57]:

Այսպիսով, Կեդրենոսի և Մատթեոսի միջև դոյություն ունեն տարաձայնություններ, որոնց միջև հաշտության եզրեր որոնելը դժվար է: Մեկն իբրև Եդեսիայում Մանիակեսի հաջորդի ընդունում է Լևոն Լեպենդրինոսին, մյուսը՝ Ապոկապեսին: 1030 թ. օգոստոս ամսից հետո արաբների դեմ դործած իր սխրանքի ժամանակ Մանիակեսը Տլուքի ստրատեգն էր: 1030 թ. հոկտեմբեր ամսին նա դրավել է Եդեսիան, և ըստ Մատթեոսի ու Արիստակեսի, այդ պահին բնակվում էր Սամոսատում, մի բան, որը հավաստվում է Կեդրենոսի վկայությամբ, այն է՝ եփրատյան քաղաքների կառավարումը նրան է տրվել ի փոխհատուցում նրա սխրանքի: Κατεπάνω τῆς κάτω Μηδίας *և* τῶν παρευφρατιδίων στρατηγῶν πόλεων *երկու արտահայտությունները մատնացույց են անում միևնույն տիրապետությունը[58]: Եդեսիայի դրավումից հետո Մանիակես պրոտոսպաթարն արժանացել է պատրիկի տիտղոսի և իր տիրապետությանն է միացրել դրավված քաղաքը: Նա զբաղեցրել է այդ պաշտոնը 1030 թ. հոկտ[եմբերից] մինչև 1034 թ. իր տեղն այնուհետև Լևոն Լեպենդր[ինո]սին զիջելու համար: Ցարեդիրը մեկ անդամ ևս նշում է.* Γεωργίου δὲ πατρικίου τοῦ Μανιάκη ἐξ Ἐδέσσης ὡ‹ς› εἴπομεν, μετατεθέντος καὶ τοῦ Λεπενδρηνοῦ ἐν αὐτῇ ἄρχειν ταχθέντος, *արաբները շարժվել են դեպի քաղաք և այն ենթակա էր դրավման, եթե Կոստանդինը՝ կայսեր եղբայրը և*

---

56 Նույն տեղում, էջ 512:

57 Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի. նշվ. աշխ., էջ 64:

58 [Ժ.] *Լորանը* ([J. L a u r e n t.] Byzance et les Turcs Seldjoucides – ["Annales de l'Est", 1913-1919,] p. 32, note V) *զուր է առարկում այս երկու արտահայտությունների համանմանության դեմ, որոնք ընդունվել են Ֆայնլայի կողմից (*[G.] F i n l a y. Hist. [T.] 1, p. 474; [L.] Brehier, Maniaces, p. 3; [G.] S c h l u m b e r g e r. L'epopee [byzantine a la fin du dixieme siecle. Partie] III. [Paris, 1905], p. 89*): Նա կարծում է, որ Մանիակեսը եղել է նախ՝ Տլուքի թեմի ստրատեգը (*[G.] C e d r [e n u s]. [նշվ. աշխ.,] *էջ 454, տող 1, այնուհետև՝ Ստորին Մեդիայի կատապանը (նույն տեղում, տող* 23)*: Միայն երկու կամ երեք տարի անց է, որ նա դարձել է եփրատյան քաղաքների ստրատեգը՝ նստավայր ունենալով Սամոսատը (նույն տեղում, էջ 500, տող* 17)*: Մեր կողմից ընդգծված բառերը ճշգրիտ չեն: Կեդրենոսի մոտ «երկու կամ երեք տարվա մասին» խոսք չկա: Այն, ինչ պատմում է Կեդրենոսը (էջ 500, տող 17), վերաբերում է աշխարհի [արարչագործության] 6540 թ. (1031–1032 թթ.): Դա Եդեսիայի դրավման տարեթիվն է (1031 թ. հոկտեմբերին): Այդ ժամանակաշրջանում Մանիակեսն արդեն եփրատյան քաղաքների ստրատեգն էր: Կեդրենոսը նշում է, որ հետագայում նա նշանակվել է Ստորին Մեդիայի կատապան՝ ի փոխհատուցում Տլուքի մոտ արաբների դեմ գործած իր սխրանքի: Այսպիսով, ակնհայտ է, որ այդ միևնույն պաշտոնն է, որը նա անվանում է եփրատյան քաղաքների ստրատեգ: Պետք չէ* η κατω Μηδια*-ն շփոթել* η ἄνω Μηδια*-ի հետ. այս վերջինը համանման է Վասպուրականի տարածաշրջանին, այնժամ, երբ առաջինի համար նա նկատի ունի Սամոսատի տարածաշրջանը: Բյուզանդական տարեգիրը խուսափում է Հայաստան բառի դործածումից և փորձում այն փոխարինել Մեդիայով՝ շահարկելով Արևելքի աշխարհագրության իր իմացությունը: Եթե այնպիսի բուն հայկական երկրամասը, ինչպիսին է Վասպուրականը, դարձել է Վերին Մեդիա, ինչու եփրատի երկարությամբ ձգվող կիսահայկական երկրամասը չէր կարող կոչվել Ստորին Մեդիա:*

Անտիոքի գուքսը, օգնական ուժեր չուղարկեր: Կայսրը Կոստանդինին է վստահել սխոլերի դոմեստիկոսի պաշտոնը[59]: 1038 թ. (աշխարհի [արարչագործության] 6546 թ., ինդիկտիոնի 6-ին) ի հայտ է դալիս մեկ այլ անձնավորություն՝ պրոտոսպաթար Βαρασβατζε-ն, այն է՝ Վարազվաչեն, որը բռնագրավել է Եդեսիայի իշխանությունը: Քաղաքը գրավելու համար արաբները հղացել են մի նենգ ծրագիր: Տասներկու արաբ, որոնց հետևում էին 500 հեծյալ և նույնքան էլ ուղտ, որոնց վրա բարձված էր հազար սնգուկ, մուտք են գործել Եդեսիա, հայտնելով, որ իրենց բեռը բաղկացած է նվերներից, որոնք տանում են կայսեր համար: Իրականում, սնդուկներից յուրաքանչյուրում գտնվում էին երկու զինվոր, որոնք գիշերը վրա հասնելուն պես պետք է դուրս դային ու գրավեին քաղաքը: Մի աղքատ հայ, որը ողորմություն ինդրելու համար գնացել էր արաբների մոտ, սնդուկներից մեկից ձայն է լսել, որն իր հարևանից հարցնում էր, թե իրենք որտե՞ղ են գտնվում: Նա այդ մասին տեղեկացրել է Վարազվաչեին և բոլոր թաքնված մարդիկ կոտորվել են[60]: Վարազվաչեն, ինչպես և Ապոկապեսն ու նույնիսկ Լևոն Լեպենդրինոսը, ինչպես մենք այդ անմիջապես կտեսնենք, իբերներ էին: Հնարավոր է, որ Մանիակեսից կամ Լեպենդրինոսից հետո ընկած ժամանակահատվածում Ասլոկապեսը ստացել է միևնույն պաշտոնը կամ եղել է կառավարչի պրոեքսիմոսը[61]: 1065 թ. դանուբյան ռազմաճակատից իր որդի Վասիլի վերադարձի ժամանակ Ապոկապեսը գեռևս բնակվում էր Եդեսիայում:

Ապոկապեսի որդի Վասիլը նշանավորվել է Մանազկերտում [սելջուկ]-թուրքական բանակի կողմից այդ քաղաքի պաշարման ժամանակ, որը գլխավորում էր անձամբ Տուղրիլը: Ավելի քան մեկ ամիս նա կատաղի դիմադրություն է ցուցաբերել և դիմակայել քաղաքը գրավելու՝ թշմանու բոլոր գրոհներին, բոլոր ջանքերին[62]: Այդ տեղի էր ունենում ըստ հ[այոց] թ[վարկության] 508 (1054) թ.: Վասիլն այդ ժամանակաշրջանում պատրիկ էր: Արժանանալով մագիստրոսի տիտղոսի, նա ուղարկվել է Դանուբի ափ, որտեղ Նիկեփորոս Բոտանիատես մագիստրոսի հետ մասնակցել է երկրամասի կառավարմանը: Նրա նշանակման տարեթիվն անհայտ է: Դա այդուհանդերձ 1065 թ. էր (աշխարհի [արարչագործության] 6573 թ. ինդիկտիոնի 3-ին և ըստ հայոց թ[վարկության] 514 թ.): Այդ տարում ուզեր կոչվող նոր բարբարոսների հորդաները հատել են [Դանուբ] գետը և հարձակվել [Բալկանյան] թերակղզու վրա՝ ամայացնելով մինչև Թեսալոնիկ, նույնիսկ Հելլադա ընկած տարածքները: Վասիլի և Նիկեփորոսի ուժերը պարտվել են և երկու զորավարները դերի են ընկել ասպատակիչների ձեռքը: Կայսր Կոստանդին Դուկասը փորձել է կաշառել բարբարոսների բարձրագույն հրամանատարներին: Զմեռը և բարբարոսների ճամբարում տարածված ժանտախտը՝ ավելի, քան կայսր Կոստանդին Դուկասի ջանքերը, ամայաց-

59 [G.] C e d r [e n u s]. [նշվ. աշխ.,] էջ 515:
60 Նույն տեղում, էջ 520:
61 Մենք գիտենք, որ քաղաքի դուքս Նիկոլաս Ռեջոնիտեսը 1065 թ. ունեցել է մի պրոեքսիմոս՝ Լևոն Դավատանոսը, որը և 1077 թ. շրջանում դարձել է նրա հաջորդներից մեկը (տե՛ս Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի. [նշվ. աշխ.,] էջ 142-144):
62 Նույն տեղում, էջ 122:

րել են բարբարոսների շարքերը, որոնց մի մասը ջախջախվել է բուլղարների և Վասգինակեսի կողմից:

Համաձայն Մատթեոսի, կայսրը պատրաստ էր դնելու գերիներին, սակայն ուղերի պահանջած փրկագինը նրան խիստ բարձր է թվացել: [Բարբարոս] զորավարներից մեկը Վասիլի հետ համաձայնության է հանգել ու գերիներին գաղտնաբար Կոստանդնուպոլիս ուղեկցել և կայսրից փոխհատուցում ստացել: Այս կերպ փրկված Վասիլը գնացել է Եգեսիա՝ իր հոր մոտ: Նա դեռևս այդտեղ էր գտնվում 1077 թ., երբ հարաբերություններ է հաստատել հայ իշխան Փիլարետոսի հետ, ոտքի հանել բնակիչներին դուքս Լևոն Դավատանոսի դեմ (ըստ բյուզանդական հեղինակների՝ Διαβατηνός*) և գրավել քաղաքը: Նա իշխանության ղեկի մոտ է եղել մինչև 1083 թ.՝ իր մահվան տարեթիվը[63]:*

1068 թ. նոյեմբեր ամսին (ինդիկտիոնի 6-ին) [Ռոմանոս IV] Դիոգենես [կայսրն] իր առաջին արշավանքի ընթացքում մահմեդականներից հետ է վերցրել Եփրատի վրա գտնվող Հիերոպոլիս քաղաքը, վերականգնել դրա միջնաբերդը և այնտեղ իբրև կայազորի պետ նշանակել Փարեսման Ապոկապեսին[64]: Դա միևնույն ընտանիքի մեկ այլ անդամն է, որին հարկ չկա շփոթելու Վասիլի հետ, ինչպես պատահականորեն այդպես է վարվել պ. Ժ. Լորանը[65]:

Վասիլը Կեդրենոսի մոտ անվանվում է Βασίλειος πατρίκιος ὁ Ἀποκάπης *(էջ 591) կամ* ὁ Ἀποκάπης *(էջ 592); (Attal., p. 46);* των Ῥωμαίων ἡγεμὼν Βασίλειος, οὗτος ὁ ἐπικεκλημένος Ἀποκάπης; *(p. 83);* τοῦ τε μαγίστρου Βασιλείου *(ըստ տպագ[իր] բնագիրի՝ իմա* βασιλέως*)* του Ἀποκάπη= *(Skylitzes, p. 654);* τοῦ μαγίστρου Βασιλείου τοῦ Ἀποκάπου *(Attal., p. 116);* καὶ στρατηγὸν ἐπίστησας Φαρασμάτιον *(իմա՝* Φαρεσμάνιον*)* ἐκεῖνον βέστην τὸν Ἀποκάπην, ἔξ Ἀρμενίων τὸ γένος ἕλκοντα *(Skylitzès, p. 675);* τὸν Φαρεσμάνην ἐκεῖνον βέστην τὸν Ἀποκάπην *(և ոչ թե* Ἀποκάπης՝ *ըստ տպագիր բնագրի): Բյուզանդացիների համար, ինչպես այդ տեսնում ենք,* Ἀποκάπης*-ը ավելի շուտ մականուն է, քան անուն: Միայն Մատթեոսն է այն ներկայացնում իբրև նրա հոր անուն: Հայերեն ձևը համապատասխանում է* Ἀποκάπης *ձևին, որն իր հերթին արտահայտում է արաբական Աբուկապ անունը: Սակայն նման անուն արաբերենում գոյություն չունի: Ապոկապեսը Դավիթ Կյուրոպաղատի բազմաթիվ ազատներից էր և նրա սենեկապետը: Նրա անունը հիշեցնում է Ապուհարպ անունը, որը հռչակավոր իշխան էր, նույնքան փառապանծ Դավթի արքունիքում, որքան և կայսր Վասիլի մոտ: Այդ նրա միջամտության շնորհիվ էր, որ Հովհաննես Աբուլհարիթը՝ սուրբ Եվթիմեոսի հայրը, կարողացել է ներկայանալ կայսրին, ինչպես վերը տեսանք: Նա Զորտուանելի-Զուրբանիելի՝ 950 թ. շրջանում Կոստանդնուպոլսում՝ Աչոտ Կյուրոպաղատի հանրահայտ բանադնացի եղբայրն էր: Դա նաև միևնույն Ապուհարպն է, որի թոռ Զորտուանելը, ըստ Ասողիկի վկայության, զոհվել է 1000 թ.: Երկու անունների նմանությունը որոշակի է. ինչ*

---

63 Նույն տեղում, էջ 216, 223:

64 A t t a l i a t, p. 116; S k y l i t z e s, p. 675.

65 [J. L a u r e n t.] *Նշվ. աշխ., էջ 43:*

վերաբերում է դրանց կրողներին, դա այլ հարց է: Մեր Ապոկապեսը, ինչպես և նրա որդի Վասիլը, մահացել են շատ տարեց հասակում: 1019 թ. Վասիլն արդեն ընտանիքի հայր էր և մահացել է 1083 թ.: Նրա հայր Ապոկապեսը 1019 թ. պետք է, որ լիներ առնվազն 40-ից 45 տարեկան, քանի որ այդ ժամանակաշրջանում նա արդեն պապ էր, այսպիսով, նա պետք է, որ ծնված լիներ 970–975 թթ. շրջանում: Քանի որ 1065 թ. նա դեռևս կենդանի էր, ապա և ոչ մի կերպ չէր կարող ծնված լինել մինչ 970 թ.: Սա հնարավորություն չի ընձեռում նմանեցնել Ապոկապեսին Ապուհարպի՝ Զորտուանելի եղբոր հետ, որը պետք է ծնված լիներ 970 թ. շատ ավելի առաջ: Այնուամենայնիվ, նա պատկանում է նրա ընտանիքին. նա հավանաբար նրա թոռն է, իր պապի անունը կրողը.



Ապոքսանեսը Դավթի սենեկապետն էր: Այդուհանդերձ, Դավթի մահվան պահին՝ 1000 թ., Ապոքսանեսը, եթե նույնիսկ ընդունենք, որ կարող էր մահացած լինել 1065–1066 թթ., կարող էր լինել ընդամենը 25 տարեկան, որը կասկածի տակ է դնում տեղեկությունն այն մասին, թե նա սենեկապետ էր եղել, եթե ընդունում ենք, որ այդ պաշտոնն Ապոկապեսի ընտանիքում եղել է ժառանգական: Ինչ վերաբերում է Զորտուանել, «չագրուվան-էլ» բառերին, ապա Արիստակեսն իրև վրան օգտագործում է «չատրուա» բառը: Ժամանակակից պարսկերենում «չագրուվան» նշանակում է տան զարդարանքներ, դորդեր: Նախնական իմաստը պետք է մոտ լինի այն իմաստին, որն արտահայտվում է «ղադիր կամ չադիր» բառով:

ԼԵՊԵՆԴՐԻՆՈՍ

1034 թ. Եդեսիայում Գեորգի Մանիակեսի հաջորդը, ինչպես մենք այդ տեսանք վերևում, անվանվում էր Լևոն Λεπενδρηνός: Դավիթ Կյուրոպաղատի իշխաններից մեկը, նա, որը 998 թ. Մամլան ամիրայի դեմ ուղարկված զորքերի հրամանատարն էր, կրում էր Ոչոպենդրայի որդի Գաբրիելի անունը: Նա մի եղբայր ուներ՝ Հովհաննեսը. նրանք զոհվել էին 1000 թ., դառնալով Դավթի ազատների և բյուզանդական բանակի ռուս վարձկանների միջև ծայր առած ընդհարումների զոհը: Թվում է, թե տարօրինակ «Ոչոնպընտրեայ» անունը կարող էր լինել Օլոպենդրայի սխալ տարրնթերցումը: Այս պարագայում նրան կարելի է նմանեցնել Լեպենդրինոսի հետ: Թվում է, թե վերջինս ունի աշխարհագրական ծագում և մատնացույց է անում նրան, ով ծագումով Լեպենդրիայից է: Կարարգից ոչ հեռավոր տարածության վրա կա մի գյուղ, որի «Էլփիլհինդ» անունը բացահայտում է

որոշակի նմանություն Լեպենդրիայի հետ[66]: «Օ» սկզբնատառը չի կարող հարուցել և ոչ մի բարդություն. Φέρσης անունը՝ «Վրաց ժամանակագրությունում»՝ Փերիզը, հայերենում ունի «Օփերս» ձևը:

Ցավալի սլատահարից հետո Վասիլ կայսրը կարող էր իր ծառայության մեջ ընդգրկել երկու սպանված եղբայրներից մեկի որդուն, և որը՝ Լևոնը, նշանակում է ստացել Եգեսիայում, որտեղ գտնվում էին նրա հայրենակիցներ Ապոկապեսը, իսկ մի փոքր անց՝ Վարազվաչեն:

ՋՈՋԻԿԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Այս իշխանը, Դավիթ Կյուրոպաղատի վասալներից մեկը, առաջին անգամ ի հայտ է գալիս 979 թ.: Այդ նրա հրամանատարությամբ է, որ Դավիթ Կյուրոպաղատն իր ուժերն օգնության է ուղարկել Վարդաս Փոկասին՝ Վարդաս Սկլերոսի դեմ[67]: Նրա որդի Փերսը 998 թ. Մամլան ամիրայի դեմ ուղղված արշավանքի ընթացքում գլխավորում էր իբերական զորքերը[68]. Երկուսն էլ իշխանների իշխան՝ «իշխան իշխանաց» էին (վրացերեն՝ «էրիսթավների էրիսթավ»):

Երբ Վասիլ կայսրը մեկնել է Իբերիա՝ Դավիթ Կյուրոպաղատի ժառանգությունը ձեռք բերելու համար և հարցը կարգավորելուց հետո այնտեղից գնացել Փյունիկե (Phenice), ի թիվս այլ իշխանների, նա իր հետ տարել է Թևդատ և Փերս երկու եղբայրներին. ἀπεισεν εἰς Φοινίκην ἔχων μεθ᾽ ἑαυτοῦ καὶ τοὺς ἐν τῇ κατ᾽ αὐτὸν Ἰβηρίᾳ κατὰ γένος πρωτεύοντας, ὧν ἦσαν κορυφαῖοι ὁ Πακουριάνος καὶ Φευδάτος (կարդա՝ Θευδάτος) καὶ Φέρσης οἱ αὐτάδελφοι, οὓς καὶ εἰς τὸν τῶν πατρικίων ἀνέβιβασε θῶκον[69]:

Նախ և առաջ հարկ է ուղղել տարեգրի կողմից իրադարձությունների հաջորդականության հարցում թույլ տրված սխալը: Դավթի հարցով Վասիլն Իբերիա է ժամանել Փյունիկեից և ոչ թե հակառակը, ինչպես կարծում է տարեգիրը: Այնուհետև՝ Վասիլը վերադարձել է Բյուզանդիա, այսպիսով, եթե նա տարել էր իբերական իշխաններին, ապա նրանց տարած կլիներ Բյուզանդիա և ոչ թե Փյունիկե:

Պակուրիանը չի պատկանում Ջոջիկի ընտանիքին. ὁ Πακουριάνος-ը միանգամայն տարբերվում է Φευδάτος (sc. Θευδάτος) καὶ Φέρσης οἱ αὐτάδελφοι-ից: Միայն այս երկու վերջիններն են եղբայրներ: Փերսը ներկայացվում է իբրև Ջոջիկի որդին: Այսպիսով, Թևդատը ևս նրա որդին է: Նիկեփորոս Փոկասի և Նիկեփորոս Քսիֆեսի ապստամբության ժամանակ Փերսը գտնվում էր իր հայրենիքում և ծառայության մեջ էր Գեորգի թագավորի մոտ: Ապստամբներն իրենց կողմն էին գրավել թագավոր Գեորգիին՝ Դավիթ Կյուրոպաղատի ժառանգությունը նրան հանձնելու խոստումով հանդերձ: Փերսին հանձնարարված էր նրանց օգնության հասնել:

---

66 Ն. Սարգիսյանն իր քարտեզի վրա նշում է «Էպիլհինդի»: Այն նշված է նաև [Հ.] Կիպերտի քարտեզի վրա որպես «Էրիլինդի»:

67 Ա ս ո ղ ի կ. [նշվ. աշխ.,] էջ 193:

68 Նույն տեղում, էջ 270:

69 [G.] C e d r [e n u s]. [նշվ. աշխ.,] էջ 447:

1022 թ. օգոստոսի 15-ին Փոկասի զոհվելուց հետո Փերսը բռնվել և մահապատժի է ենթարկվել իր փեսա Անդրոնիկոսի հետ[70]:

Թևդատն ուներ Ցիցիկիոս անունով մի որդի, որը Զոջիկի հունարեն ձևն է: 1016 թ. նա Դորոստոլի ստրատեգն էր, որտեղից Վասիլ կայսրին հայտնել է, որ [բուլղարացիների ցար] Իվան Վլադիսլավը Պատզինակեսների օգնությամբ հարձակման էր նախապատրաստվում[71]: *Գտնում են նաև, որ նա ունեցել է մեկ կամ երկու զարմիկ: Կոստանդին Դիոգենեսի կողմից Ռոմանոս կայսեր դեմ հյուսված դավադրության մասնակիցների թվում ընդգրկված էր* Γεώργιός τε καὶ Βαρασβατζὲ ὁ ἐν τῷ ὄρει τῷ Ἀθῳ τὴν των Ἰβήρων μονὴν συστησάμενος, οἱ τοῦ πατρικίου Θευδάτου ἀνεψιοί[72]: *Թևդատի զարմիկները կարող էին լինել նրա եղբայր Փերսի որդիները: Ինագիրը Վարազվաչեին ներկայացնում է իբրև Athոսում գտնվող իբերների վանքի հիմնադրի, մի բան, որը ինգիրը բարդացնում է, քանզի բավական հավաստի տեղեկություններն այդ պատիվը վերապահում են Գեորգիին: Սուրբ Եվթիմեոսը, որն իր հորը հաջորդել էր վանահոր պաշտոնում, 14 տարի այդ վարելուց հետո այն զիջել է Գեորգիին նվիրաբերվելու համար դրական աշխատանքների: Այս Գեորգին մասնակցել է Կոստանդին Դիոգենեսի դավադրությանը և արտաքսվելով մահկանացուն կնքել աքսորում: Այսպիսով, նա նույնանում է Վարազվաչեի հետ հիշատակված միևնույն անունը կրող անձնավորության հետ: Սակայն վրացական փաստաթղթերում հենց այս Գեորգին է, որ կրում է «մաշեներելիի» տիտղոսը, որը նշանակում է «չինարար»: Գեորգիի մարմինը տեղափոխվել և տեղադրվել է դամբարանում, որը կենդանության օրոք անձամբ ինքն էր կառուցել: Նրա հիշատակը նշվում էր հուլիսի 29-ին, համաձայն այն ծեսի, որն ի պատիվ չինարարների (մաշենեբելտաների) գոյություն ուներ վանքում. նա անվանվել է «Գեորգի մագիստրոս»*[73]: *Երբ նրա հաջորդներից մեկը՝ Գեորգի Հագիոբիտը, 1066 թ. հունիսի 29-ին մահացել է, նրա նշխարները տեղադրվել են «Գեորգի Շինարարի» (մաշենեբելիի) աճյունափոսում*[74]: *Վերջապես, անձամբ Գեորգիի կողմից վանքի պատին փորագրված արձանագրություններից մեկում նշված է.* εγὼ εστερεωσα τοὺς στύλους αὐτῆς καὶ εἰς τὸν αἰῶνα οὐ σαλευθήσεται. Γεώργιος μοναχός, ὁ Ἴβηρ καὶ κτήτωρ (*sc.* κτίτωρ)[75]: *Այսպիսով, Գեորգին արժանացել էր «մաշեներելիի» պատվավոր մականվանը* κτίτωρ *եկեղեցու սյուները վերականգնելու կամ ամրացնելու համար: Տարեգրի* ὁ ἐν τῷ ὄρει τῷ Ἀ-

---

70 Նույն տեղում, էջ 478: Ա ր ի ս տ ա կ ե ս Լ ա ս տ ի վ ե ր տ ց ի. [*նշվ. աշխ.,*] *էջ 22;* [P. P e e t e r s]. La vie de S. Georges l'Hagiorite. [trad. latine].– "Anal[ecta] Bol[andiana]". [T.] XXXVI–XXXVII, § 13.

71 [G.] C e d r [e n u s]. [*նշվ. աշխ.,*] *էջ 465* (Τζιτζικίου τοῦ υἱου τοῦ πατρικίου Θευδάτου του Ἰβηρος).

72 Նույն տեղում, էջ 488:

73 ცხოვრებაი ნეტარისა მამისა ჩუენისა იოანესი და ეფთვიმესი,- "ათონის ივერიის მონასტრის 1074 წ. ხელნაწერი აღაპებით", [თბილისი, 1901,] გვ. 240.

74 P. P e e t e r s. *նշվ. աշխ., §§ 97-98. Գեորգին մահացել է Պողոս և Պետրոս [առաքյալների] տոնի օրը, այսպիսով, հունիսի 29-ին, իսկ նախօրեին հունիսի 28-ի օրը, եղել է չորեքշաբթի: Դա 1066 թվականին էր (և ոչ թե 1065 թ.): Հունիսի 28-ը համապատասխանում է 1066 թ. չորեքշաբթի օրվան (և 1065 թ. երեքշաբթի օրվան):*

75 S m y r n a k i s. "Ἅγιου Ὄρος, p. 467.

θῷ τὴν τῶν Ἰβήρων μονὴν συστησάμενος բառերը համապատասխանում են ավելի շուտ Գեորգիին, քան Վարազվաչեին, որին դրանք վերագրվում են: Դրանք լուսանցքներում արված նշումի տեսք ունեն, որոնք այնուհետև թափանցել են բնագրի մեջ և տեղ զբաղեցրել Βαρασβατζέ-ից հետո, այն դեպքում, երբ վերաբերում էին Γεώργιος-ին: Հանրահայտ է Թոռնիկին վերաբերող համանման մի պարգաբանում «De Administrando [Imperio]»-ի ձեռագրում: Գեորգիի աքսորին վերաբերող դատավճռից փոքր անց հանդիպում ենք մի Βαρασβατζε-ի, որն իբրև ստրատեգ 1038 թ. (ինդ[իկտիոնի] 6-ին, աշխարհի [արարչագործության] 6546 թ.) գտնվում էր կայսեր ծառայության մեջ Եդեսիայում[76]: Այս անունն այնքան հազվադեպ է, որ այլևս ի հայտ չի գալիս բյուզանդացիների մոտ և իրավացի կլինենք, եթե նրան նույնացնենք Գեորգիի եղբոր հետ: Ռոմանոսի հաջորդը կարող էր նրան ներել և նշանակել Եդեսիայի կառավարիչ:

Այդուհանդերձ, Սմիրնակիսը նշում է XI դ. մի ոսկե կնիքի մասին, որը տրվել է Միքայել Պափլագոնացու կողմից, որտեղ Γεώργιος επωνυμεῖτο Βαρασβατζέ և որը Եվթիմեոսից հետո եղել է վանահայր[77]: Եթե դա ճիշտ է, Կեդրենոսի բնագիրը պետք է ուղղվի, մի բան, որն արել է Պ. Պետերսը՝ երկու եղբայրներին դարձնելով երկու անուն կրող մեկ անձնավորություն: Ի դեպ, խնդիրը բարդանում է նրանով, որ միևնույն հեղինակը Հովհաննես Աբուլհարիթին ներկայացնում է Հովհաննես Վարազվաչե անվամբ: Սա սխալ է կամ տեղի է ունեցել խառնաշփոթ կապված Թոռնիկի եղբոր հետ, որը հիրավի անվանվում էր Հովհաննես Վարազվաչե: Սմիրնակիսը նմանապես հիշատակում է մեկ այլ 1032 թ. ինդիկտիոնի 1-ով թվագրված փաստաթղթի մասին, որի ներքո ստորագրողների թվում կարելի է կարդալ իրեր վանական Գեորգիի անունը[78]: Համաձայն այն ամենի, ինչ մեզ պատմում է Կեդրենոսը, Գեորգին պետք է, որ դատապարտված լիներ նախքան 1032 թ.: Դավադրության կազմակերպիչ Կոստանդին Դիոգենեսը նախ և առաջ արգելափակվել է աշտարակում, այնուհետև՝ նրան այդտեղից դուրս են բերել, որպեսզի 1031 թ. (աշխարհի [արարչագործության] 6539 թ., ինդիկտիոնի 14-ին) Ստուդիոսի վանքում դարձնեն վանական: Հաջորդ տարի նրան կասկածել են մի նոր մեքենայության մեջ. նրան ձերբակալել են Բլաչերնիի ապարանքում, որտեղից նա փորձել է ճողոպրել և ընկնելով պատից՝ 1032 թ. կնքել է իր մահկանացուն[79]: Դժվար է ընդունել, որ Գեորգին կարող էր դատապարտված լինել Դիոգենեսի մահվանից հետո, և որ 1032 թ. նա դեռևս ազատության մեջ էր գտնվում՝ ստորագրելու համար մի փաստաթուղթ: Այս ամենը թելադրում է որոշակի վերապահությամբ վերաբերվելու Սմիրնակիսի հղումներին և պնդումներին՝ ներառյալ խնդրո առարկա փաստաթղթերի հրապարակումը:

Թե քանի որդի ուներ իշխան Փերսը՝ մեկ կամ երկու, մնում է առնվազն երկիմաստ: Մենք վերը հիշատակեցինք Դավիթ Կյուրոպաղատի՝ Մամլանի դեմ ձեռնարկած արշավանքի մասին, որին մասնակցել է Փերսը: Համա-

---

76 [G.] C e d r [e n u s]. [նշվ. աշխ.,] էջ 520:
77 S m y r n a k i s. "Αγιου "Ορος, p. 478.
78 Նույն տեղում, էջ 42:
79 [G.] C e d r [e n u s]. [նշվ. աշխ.,] էջ 487, 497–498:

ձայն միևնույն արշավանքին վերաբերող պատումի մեկ այլ մեկնակերպի. Փերսը միայնակ չէր՝ Դավթի բանակն ուներ երեք զորահրամանատար՝ Կաչեն, Թևդաաը և Օփերսը: Վերջին երկու անունները մեզ ծանոթ են: Վաչեն մեծապես հիշեցնում է Βαρασβατζε-ին, որը հայերեն նշանակում է Վարազ-Վաչե: Այն փաստը, որ Վաչեն ուղեկցում է երկու եղբայրներին, ծատնացույց է անում, որ նա նրանց հետ սերտ կապի մեջ էր. մասնակցե՞լ էր նա պատերազմին, թե ոչ, այնքան էլ կարևոր չէ: Կարելի է նրան ընդունել իբրև Փերսի որդու: Այդ նա է Գեորգի վանականը, նույն ինքը՝ Վարազվաչեն կամ նրա եղբայր Վարազվաչեն: Քանի որ Թևդատի որդի Ցիցիկիոսը, Փերսի որդի (կամ որդիներ) Գեորգի-Վարազվաչեն Վասիլի կողմից 1000 թ. տարվել էին Բյուզանդիա, Գեորգի-Վարազվաչեն նախքան վանականի սքեմ հագնելը, արժանացել էր մագիստրոսի տիտղոսի և պատկանում էր, այսպիսով, բարձր հիերարխիային, որտեղից էլ սկիզբ էին առնում նրա հարաբերություններն արքունիքի հետ և նրա աղետալի վախճանը:

ԼԻՊԱՐԻՏԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Այն հատվածում, ուր Կեդրենոսը խոսում է Լիպարիտի մորը հասցված վիրավորանքի մասին, հարկ է նշել. ἡν δὲ ὁ Λιπαρίτης υἱος του ἐπὶ βασιλέως Βασιλείου ἐν τῷ πρὸς τὸν Γεώργιον πολέμῳ ἀναιρεθέντος Ὀρατίου τοῦ Λιπαρίτου[80]:

Այդուհանդերձ, Ὀράτιος-ը հիշատակված չէ Գեորգիի և Վասիլի միջև տեղի ունեցած պատերազմին վերաբերող պատումի մեջ, այն ճակատամարտի ընթացքում, որը հետևում է 1022 թ. սեպտեմբերի 11-ին (ինդիկտիոնի 6-ին, աշխարհի [արարչագործության] 6531 թ.) πίπτει μὲν ὁ Λιπαρίτης (οὗτος γὰρ ἦν ἀρχιστράτηγος τῷ Γεωργίῳ) καὶ σὺν αὐτῷ πᾶν τὸ κρατιστεῦον ἐν Ἀβασγοῖς[81]: Բյուզանդացի տարեգրի մոտ կա իրադարձությունների և անձանց խառնաշփոթ:

Առաջին զինված ընդհարումը Գեորգիի հետ կայսր Վասիլն ունեցել է 1021 թ., համաձայն Արիստակես [Լաստիվերտցու]՝ Պաղակացիս լճի տարածաշրջանում, ըստ Սամուել [Անեցու]՝ Շիրակի հարթավայրում, ճահճի («մօրատ» հարկ է կարդալ՝ «մօրուտ») մոտակայքում: Ըստ «Վրաց ժամանակագրության» ճակատամարտը տեղի է ունեցել Շիրիմ գյուղում[82]: Հենց այդտեղ, այդ ճակատամարտում է, որ համաձայն Արիստակեսի, սպանվել է Ռատը՝ Լիպարիտի որդին, և «Վրաց ժամանակագրությունն» ավելացնում է ոմն Խուրսի անունը: Բյուզանդացիներն այն վերածել են Օրաթիուսի:

Վասիլն այնուհետև նահանջել է դեպի Տրապիզոն, այնտեղ անցկացրել ձմեռը: Հաջորդ տարի բռնկվել է Նիկեփորոս Փոկասի և Քսիֆեսի ապստամբությունը, որոնք պայմանավորվածություն էին կայացրել Գեորգիի հետ: Վասիլին հաջողվել է ճնշել ապստամբությունը. 1022 թ. օգոստոսի 15-ին Նիկեփորոս Փոկասը սպանվել է Քսիֆեսի կողմից, իսկ փոքը անց

80 Նույն տեղում, էջ 572:
81 Նույն տեղում, էջ 478:
82 Արիստակես Լաստիվերտցի. [Նշվ. աշխ.,] էջ 13, Սամուել Անեցի. [Նշվ. աշխ.,] էջ 105: «Վրաց ժամանակագրությունը» առաջարկում է հայերեն «շիրիմք» բառը (M. Brosset. Նշվ. աշխ.,] էջ 306:

Քսիֆեսն ընկել է կայսեր ձեռքը: Սհարկու ապստամբներից ձերբազատված Վասիլը շարժվել է Գեորգիի դեմ և նրա հետ [ճակատամարտել] Բասենում՝ Սալքորա գյուղի մոտակայքում՝ Ստպա տեղանքում: Կեդրենոսի մոտ խոսքը վերաբերում է այս ճակատամարտին, որը և նա թվագրում է 1022 թ. սեպտեմբերի 11-ով: «Վրաց ժամանակագրությունը» հիշատակում է Ռատի եղբայր Զվիագի՝ իբրև Գեորգիի բանակի զորավարի մասին[83]: Սամուելը նրան անվանում է Զուատ (Զվատ) և նշում, որ նա գերեվարվել է, իսկ այնուհետև՝ փրկագնվել թագավոր Գեորգիի կողմից[84]: Յահյան ևս ճանաչում է իբերական բանակի այս հրամանատարին, որի անունը բարոն Ռոզենի հրատարակության մեջ կարդացվում է Ռ-ֆադ-էս՝ Զ-ֆադ-էս-ի փոխարեն և որը սխալմամբ այն ընդունել է իբրև Լիպարիտի անվան ձևափոխված տարբերակ[85]: Յահյայի խոսքերով՝ Ռ-ֆադ-էս-ը (Զվիադը) հաշտության կնքման պատրվակի ներքո հրապուրելով կայսրին՝ նրան բերել է երկրի ներքին նահանգները և նենգորեն հարձակվել նրա վրա: «Վրաց ժամանակագրությունը» նշում է, որ Գեորգի թագավորը Զվիադին հանձնարարել է «հաշտության բանակցությունների ընթացքում» պատրաստ լինել յուրաքանչյուր շրջադարձի: Զվիադը մտել է Բասեն և ճամբարել: «Եթե կայսրը ցանկանում է հաշտություն,– ասում էր նա,– թող, որ այն կայանա. եթե նա ցանկանում է մարտնչել, նախապատրաստություններ տեսնենք»: «Վրաց ժամանակագրությունը» նենգության մեջ Զվիադին մեղադրում է ավելի նվազ չափով, քան թագավորի ազնվականներին առհասարակ, որոնք «լինելով կրկնակի նենգ, չէին թույլատրում թագավորին հաշտություն կնքել»: Նրանք քայլում էին Վասիլի կողքին, բայց թագավորին խորհուրդ էին տալիս հենվել զենքի վրա: Կայսրը նրանց էր սպասում, ենթադրելով, որ նրանք ունեին խաղաղասիրական մտադրություններ: Սա հավաստում է, որ Յահյայի Ռ-ֆադ-էս-ը հիրավի «[Վրաց] ժամանակագրության» Զվիադն է:

Ըստ Կեդրենոսի, Λιπαρίτης-ը զոհվել է 1022 թ. սեպտեմբերի 11-ի ճակատամարտում: Նա ենթադրում է, որ խոսքը Լիպարիտի «որդու» մասին է: Վերջինս ուներ երկու որդի՝ Ռատը և Զվիադը: Բյուզանդացի տարեգիրը որոշ բաներ շփոթել է: Զվիադն էր, որը սեպտեմբերի 11-ին ընկել էր Վասիլի ձեռքը, իսկ այնուհետև՝ ազատ արձակվել և ոչ թե սպանվել: Նրա եղբայր Ռատը սպանվել էր այն ճակատամարտում, որը տեղի էր ունեցել նախորդ տարում՝ 1021 թ. Պաղակացիսի մոտ և ոչ թե 1022 թ. սեպտեմբերի 11-ի մարտում: Փերսի՝ Գեորգիի մեկ այլ իշխանի հանգամանքը մասնավոր է: Իբրև Նիկեփորոս Փոկասի կողմնակցի՝ նրան գլխատել են 1022 թ. օգոստոսի 15-ին՝ խռովության ճնշումից հետո:

Ֆրանսերենից թարգմանեց
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

---

83 Նույն տեղում, էջ 308:

84 Սամուել Անեցի. [նշվ. աշխ.,] էջ 105:

85 Yahya. [նշվ. աշխ.,] էջ 65, 381 (ծանոթագրությունը). Ե. Հոնիգմանը հավասարապես սխալվում է նմանեցնելով Ռ-ֆադ-էսին Փերսի հետ ([E. Honigmann.] Die Ostgrenze des Byz[antinischen] Reiches [von 363 bis 1071 nach griechischen, arabischen, syrischen und armenischen Quellen, Bruxelles, 1935], S. 164):